

17-18(620-621)

1.07.2021

Չրատարակվում է  
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել զինասարտություն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

# ԼՍԱՐԱՐ

Лусарар

ԿՐԹԱԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԵՐԹ

Lusarar

## ...ՈՐ ԹՇՆԱՄԻՆ ՎԱԽԵՆԱ ՄԵՐ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Վերջին օրերին համացանցում և մամուլում շրջանառվում են տեղեկություններ այն մասին, որ Ադրբեջանից ու Թուրքիայից գանգում են արցախցիներին և առաջարկում վաճառել իրենց բնակարանները: Հիմնավորումն այն է, որ Ղարաբաղը մոտ ապագայում, իբր, մտնելու է Ադրբեջանի կազմի մեջ, և այն ժամանակ արտագաղթողների համար դժվար կլինի հարմար գներով վաճառել տները:

Անկախ նրանից, պաշտոնապես հերքվել են այդ լուրերը, թե ոչ, նման սադրանքներ ադրբեջանական քարոզչամեթոդային կողմից միշտ էլ լինելու են: Անցած շուրջ երեք տասնամյակում Ադրբեջանն այդ գործում մեծ փորձ է ձեռք բերել և, անկասկած, շարունակաբար դիմելու է ամեն մի կեղտոտ միջոցի, որպեսզի հոգեբանական վախ առաջացնի արցախցիներին մոտ:

Թշնամին թշնամի է բոլոր պարագաներում, և սա պետք է ուղեկցի լինի մեր հետագա գործողություններում: Պատերազմը դեռ չի ավարտվել. անցյալ տարվա նոյեմբերի իննիս ընդամենը զինադադար է կնքվել կողմերի միջև, և քանի դեռ ռուսական խաղաղարար գորախումբն Արցախում է գտնվում, տեսականորեն բացառվում է հրկամարտության թեժացումը, զոհեր եռակողմ պայմանավորված ժամկետի կտրվածքով:

Ի՞նչ կլինի չորսուկես տարի հետո: Տրամաբանական է, թուրքը չի ցանկանա խաղաղ ձևով հետ վերադարձնել Շուշին, Հաղուրթը, Ասկերանի վերին ենթաշրջանի գյուղերը, մյուս գրավյալ տարածքները: Հետևություն. պիտի վերստին ցուլա հայոց սուրբ, այս անգամ արդեն հաղթանակի շողերով: Ադրբեջանը հենց այս հեռանկարից է վախենում, քանզի 44-օրյա պատերազմի արդյունքը Բաքվի համար լրկ այլուռայան հաղթանակ էր, և այդ արդյունքը հազիվ թե բավարարում է կասպյան հանրապետությանը:

Նկատենք, արցախյան երրորդ պատերազմում հայկական կողմից ներգրավված է եղել հիմնականում Արցախի Հանրապետության պաշտպանության բանակը, ՀՀ զինված ուժերը անբողջությամբ ներառված չէին ռազմագործողություններում: Մինչդեռ Ադրբեջանն իր ողջ զինանոցն է օգտագործել՝ ներառյալ թուրքական, հրեական ու պակիստանյան զինված աջակցությունը: Տրամաբանական է, հաջորդ հավանական պատերազմում իսլամա-հրեական այլանը չի կարողանա գործել նույն արդյունավետությամբ, որովհետև աշխարհաքաղաքական նոր դասավորվածությունը դրա հնարավորությունը դժվար թե տա: Հետպատերազմյան ժամանակահատվածում անցկացված թուրք-ադրբեջանական համատեղ գորավարությունները պարզապես անպարտելիության իմիտացիա են, իրականում Ադրբեջանը խնդիր ունի հնարավորինս կարճ ժամկետում վերականգնել պատերազմի ընթացքում լրջորեն կազմաքանդված իր ռազմաուժը: Այդ խնդիրն, ի դեպ, հայերն էլ ունենք, և այս համատեքստում հայկական տիրույթում խուճապ առաջացնելու ադրբեջանական փորձերը բուն խնդրից մեզ շեղելու պարզ նպատակ են հետապնդում:

Անդրադառնալով բնակարանները վաճառելու թեմային, նշենք, որ դա այնքան էլ հեշտ գործընթաց չէ: Պետական լիարժեք վերահսկելիության պայմաններում դա նույնիսկ անհնար է, քանի որ կադաստրային ձևակերպումներն ի ցույց կդնեն մերկանտիլ մտադրությունները: Կարելի է պատկերացնել, թե ինչ պարսավանքի կարող է ենթարկվել անձը, եթե հանրությունն իմանա նրա՝ թուրքին բնակարան վաճառելու ցանկության մասին:

Սա խնդրի բարոյահոգեբանական կողմն է, իսկ իրավական կողմը թերևս այն կլինի, որ օրենսդրորեն անրատնդենք պահանջը, ըստ որի Արցախի Հանրապետության քաղաքացին չի կարող իր անշարժ և շարժական գույքը վաճառել օտարերկրյա քաղաքացուն, եթե դա ԱՀ օրենսդրության շրջանակում իրականացվող բիզնես ծրագրի բաղկացուցիչ չի հանդիսանում:

Չտրվենք սադրանքներին, այլ շարունակելով ապրել նախնայց հողում, սիրենք մեր հայրենիքն այնպես, որ ինչպես լեզենդար Ավոն է ասել, թշնամին վախենա այդ սիրուց:

«ԼՍԱՐԱՐ»

## ՍԱ ՄԵՐ ՊԱՅՔԱՐՆ Է



«Թշնամու համար ուժեղ կրթություն, գիտություն, մշակույթ, սպորտ ունեցող երկիրը ահ ու սարսափ է: Մենք մեր ողբերգությունը հաղթահարելու ենք ստեղծագործելով, ստեղծարար լինելով»,- Տոդի արվեստի դպրոցի հաշվետու համերգին ասել է ԱՀ ԿԳՄՍ նախարար Լուսինե Ղարախանյանը:

Մենք պարով քաջության, անվախության, հոգեկերտվածք ենք ձևավորում: Պարը ինքը քեզ, ակունքներիդ մոտենալու շատ յուրօրինակ ճանապարհ է: Պարն աղոթք է շարժման մեջ:

Նկարում՝ Պարում են Հաբերդում:

## ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԿԱՆ ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԽԱՉՄԵՐՈՒԿՈՒՄ

Բնակչության հոգեկան դիմակայության բարձրացման խնդիրներին էր նվիրված հունիսի 25-26-ը Արցախի պետական համալսարանում «Հետպատերազմյան սինդրոմներ» թեմայով աշխատաժողովը, որին մասնակցում էին ԵՊՀ, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ ճանաչված գիտնական-հոգեբաններ, տեղի մասնագետներ: Ներկա էին ԱՀ պետնախարար Արտակ Բեգլարյանը, ԿԳՄՍ նախարար Լուսինե Ղարախանյանը:

Աշխատաժողովը մեկնարկեց 2020թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից Արցախում սանձազերծված սարսափելի պատերազմի արդյունքում մեր գոհված քաջորդիների հիշատակին հարգանքի տուրքով: Արցախի մայր բուհը նույնպես մեծ կորուստներ է կրել. 24 գոհված, երկու անհետ կորած ուսանող:

Ողջունելով աշխատաժողովի մասնակիցներին՝ ԱրՊՀ ղեկավար Արմեն Սարգսյանն իր գոհունակությունը հայտնեց հրատապ այս միջոցառման առթիվ, որը բնակչության շրջանում հոգեբանական աջակցության ծառայության խնդիրներից բացի պետք է քննարկի ԱրՊՀ-ում տարեցտարի զարգացում ապրող հոգեբանական կրթական ծրագրին վերաբերող հարցեր:

ԱՀ պետական նախարար Արտակ Բեգլարյանը աշխատաժողովը համարեց պահանջված՝ նշելով, որ պատերազմից առաջ էլ բնակչության հետ տարվող հոգեբանական աշխատանքի համար բարենպաստ պայմանների ստեղծման կարիք կար, իսկ պատերազմից հետո առավել ևս պարտավորված ենք օր առաջ խնդիրները հասկանալու և արագ լուծումներ տալու. «Հիմա մեզ համար՝ որպես որոշում կայացողների, կարևոր է հասկանալ, թե ինչ մեխանիզմներ պետք է կիրառենք և ինչ մասնագիտական կարողություններ զարգացնենք, որպեսզի առաջիկայում համակարգված, ինստիտուցիոնալ մեխանիզմներով հնարավորինս արագ ու արդյունավետ լուծումներ տանք ետպատերազմյան հոգեբանական խնդիրներին»:

Ելույթ ունենալով՝ ԱՀ ԿԳՄՍ նախարար Լուսինե Ղարախանյանը նշեց, որ համակարգը ծանր կորուստներ ունենալով հանդերձ իմնականում ինքնակազմակերպվել է: Այնուամենայնիվ, բնակչությունը գտնվում է ծանր հոգեվիճակում և հոգեկան վերականգնման խիստ կարիք է զգում: Նախարարը ողջունեց հայաստանյան բարձրակարգ մասնագետներին

այցը Արցախ. «Ցանկացած արժեքավոր, քանկ այց ինտելեկտուալ առումով մեզ ոգևորում և օգնում է առաջ գնալ: Մենք ուզում ենք, որ Արցախ գան բոլոր բարձր կարգի մասնագետները և իրենց հմտությունը, գիտելիքը, կարողությունը մեզ փոխանցեն, որպեսզի Արցախը Արցախ դարձնենք»:

Այս գործընթացում Լ.Ղարախանյանը կարևոր է համարում մտավորականության լուսավոր գաղափարական աշխատանքը, որի շնորհիվ, ինչպես մեկ դար առաջ, երբ երկիրը դարձյալ գտնվում էր բզկտված վիճակում, հայ ժողովուրդը կարողացավ վերագտնել իրեն և առաջ



գնալ: Նախարարն անդրադարձավ այդ նպատակով ուսուցիչների համար կազմակերպված հոգեբանական վերապատրաստման աշխատանքներին, որոնք շարունակական բնույթ են կրում:

Աշխատաժողովի կազմակոմիտեի նախագահ, ԱրՊՀ պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը ներկայացրեց Արցախի մայր բուհի անցած կեսդարյա ուղին և առկա մարտահրավերները մասնավորապես հոգեբանական ասպեկտով: Այն, որ աշխատաժողովը նպատակ է դրել ակադեմիական միջավայրում քննարկել ետպատերազմյան իրավիճակում ծագած սոցիալ-հոգեբանական խնդիրները, արդեն իսկ խոսում է ոլորտը գիտական հենքի վրա դնելու անհրաժեշտության մասին: ԱրՊՀ-ում արդեն 4 տարի է, ինչ գործում է հոգեբանական կենտրոն, որը հասցրել է որոշ աշխատանքներ կատարել, բայց անելիքները հսկայական են՝ ետպատերազմյան իրավիճակով պայմանավորված, որը պահանջում է արագ ելքեր գտնելու հնարավորությունների ստեղծում:

ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան Էդիկ Մինասյանը, զուգահեռներ անցկացնելով անցյալ դարի 20-ական թվականների և ներկայիս միջև, համոզմունք հայտնեց, որ մեր ժողովուրդը ներ-

կա ճգնաժամն էլ կհաղթահարի պետականության ամրապնդման, ազգի համախմբման ու միասնականության, և այդ ամենը՝ նաև հոգեբանական աջակցության շնորհիվ: Դա այսօր առավել քան կարևոր է, քանի որ կանգնած ենք պետականության կորստի վտանգի առաջ:

ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ամբիոնի դեկան, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալեքսան Բաղդասարյանի համոզմամբ՝ Արցախում, ինչու չէ, նաև Հայաստանում տիրող իրավիճակը բոլորիս ցավն է, անհանգստությունը, բայց անընդհատ խոսել ցավի մասին՝ նշանակում է անվերջ ցավի մեջ լինել: Ամենակարևորն այն է, որ բոլորս կյանքի մեջ ենք, և ինչպես ցույց է տալիս աշխատաժողովը, պատրաստակամություն կա միմյանց աջակցելու և համատեղ գործելու:

ԵՊՀ ընդհանուր հոգեբանության ամբիոնի վարիչ Հրանտ Ավանեսյանի դիտարկմամբ, 1988 թվականին մեր ազգը մեծ արհավիրքի, մեծ դժվարության մեջ էր և ավելի մեծ կորուստներից հետո ուժ գտավ վերականգնվելու, շարունակելու անկախության համար պայքարը: Նա կոչ արեց միմյանց հանդիպելուց խոսել նոր ստեղծվող հնարավորությունների և բացահայտումների մասին: Մեկս մյուսին ուժ տանք, մեկս մյուսի ներուժի մեջ գտնենք պոզիտիվը: «Մեծ դժվարությունների, ճգնաժամի մեջ ենք, բայց դուրս ենք գալու»,- վստահ է նա:

Աշխատաժողովը ողջունեցին, հոգեբան, ԵՊՀ դոցենտ Անահիտ Սահակյանը, ԱրՊՀ-ից պրոֆեսոր Արզիկ Մխիթարյանը, Ստեփանակերտի վերականգնողական կենտրոնի դեկան Կարգան Թադևոսյանը:

ԵՊՀ սոցիոլոգիայի ամբիոնի դոցենտ, Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիայի նախագահ Միրա Անտոնյանը աշխատաժողովին ներկայացրեց «Հոգեկան առողջության պահպանման համակարգի ներդրումը Արցախում» հայեցակարգը, որը քննարկվել է նաև ԱՀ կառավարությունում և հավանության արժանացել: Բնակչության հոգեկան ամրապնդման ու ապահովման ուղղված ծառայություններ պետք է ներդրվեն Արցախում, այդ նպատակով սեպտեմբերից՝ նաև սոցիալական աշխատանքի կրթական ծրագրի բուհերում:

Ս. ԽԱՉՄՆՈՒԿ

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՆՊԱՏ ԱՅՍ ԾԱՆՐՈՒԹՅԱՆ ՏԱԿ ՊԵՏՔ Է ԲՈՒՐ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԻՆՔՆԱՍՈՒՄ ԸՆԴՈՒՆԱԿԵԼ ԱՐՃԱՄԻ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊԵՂՄԱՆՆ ՈՒՂՎԱԾ ԲԱՅԼԵՐԸ

(«Լուսարար»-ի հարցերին պատասխանում է ԱՅ գլխավոր դատախազ, արդարադատության երկրորդ դասի պետական խորհրդական ԳՈՒՐԳԵՆ ՆԵՐՍԻՍՅԱՆԸ)



- Պարոն Ներսիսյան, ի սկզբանե ուզում ենք ասել, որ ակնկալում ենք անկեղծ և որոշակի սուր հարցերի միջոցով ստանալ մի շարք հարցերի ու մտահոգությունների վերաբերյալ Ձեր պատասխաններն ու պարզաբանումները, որոնք այս փուլում շատ մեծ կարևորություն են ներկայացնում:

- Պատրաստ եմ պատասխանել Ձեր ցանկացած հարցի և դրանց առնչությամբ բացարձակ անկեղծությամբ ու հանրության համար առավելագույն մատչելիությամբ ներկայացնելու իմ կարծիքն ու դատախազության համակարգի մոտեցումները:

- Արդեն չորս ամիս է, ինչ Արցախի Հանրապետության գլխավոր դատախազն եք: Դա, իհարկե, ոչ երկար, բայց միաժամանակ նաև կարճ ժամանակ է: Ի՞նչը կընդգծեիք որպես Ձեր չորսամսյա պաշտոնավարման շրջափելի արդյունք:

- Բավականին ճիշտ արժանագրում կատարեցիք: Իրականում չորս ամիսը գլխավոր դատախազի պաշտոնում պաշտոնավարելու երկար ժամանակ չէ, բայց ինձ մոտ գործնականում այլ ընկալում կա, քանի որ այդ չորս ամսվա ամեն րոպեյն ամբողջացած էր հագեցած ու լարված աշխատանքով, այդ պատճառով այն ինձ բավականին երկար է թվում: Երբ ծանրաբեռնված ու գերլարված աշխատանքը զուգակցվում է հետպատերազմյան արտակարգ պայմաններով, մարդկային ծանր հոգեվիճակներով, մինչև անգամ ամենապարզ դեպքերը լարվածության պատճառով աղետալի իրադարձությունների վերածվելու բարձր հավանականությամբ, պատասխանատվության շեմը բարձրանում է գրեթե անհասելի աստիճանի: Անցած ամիսներին մենք աշխատել ու հիմա էլ շարունակում ենք զտնվել հենց նման պայմաններում: Արցախի Հանրապետության դատախազությունը, քննչական մարմինը, ոստիկանությունը այսօր գործում են իրենց պատմության մեջ երկի նախադեպը չունեցող ծանրաբեռնվածության պայմաններում, ինչը նշածիս հավաստումն է: Դատախազական աշխատանքում կան նկատելի ու ներքին, հանրության համար ոչ նկատելի ուղղություններ: Չորս ամսվա ընթացքում արտաքին, նկատելի ուղղություններում մենք կարողացանք որոշակիորեն վերականգնել հանրության հետ կապը, որը, մեղմ ասած, խզված էր: Իհարկե, այս ուղղությամբ անելիքներն անսպառ են, քանզի հանրության հետ կապը վստահության վերականգնման առաջին քայլն է, բայց միակ ցուցիչը չէ: Չորս ամսվա ընթացքում անձնական ընդունելությամբ միայն գլխավոր դատախազի մոտ ներկայացել է 144 քաղաքացի. այս թիվը գերազանցում է նախկինում ընդունելության մի քանի տարվա ցուցանիշը, ինչը, կարծում եմ, տվյալ ուղղությամբ խոսում է բնութագրիչ է և թույլ է տալիս վստահաբար ասել, որ քաղաքացիների մոտ արդեն առկա է դատախազության հանդեպ վստահության ձևավորման բարենպաստ մթնոլորտ: Ես անձամբ բավականին մեծ աշխատանք եմ կատարել, որպեսզի հանրության մոտ վերանա դատախազության՝ որպես պատժիչ կառույցի, ընկալումը, այն դիտարկվի որպես պետական մարմին, որը կարող է պաշտպանել քաղաքացուն և նրա իրա-

վունքներն ու օրինական շահերը: Նույն այդ նպատակով հաճախակի այցելել եմ և շարունակում եմ այցելել արցախյան տարբեր համայնքներ, հանդիպել բնակիչների հետ, քննարկել առկա խնդիրները, դրանց վերացման ուղիները: Նման ամեն հանդիպումից հետո հասկանում եմ, թե որքան կարևոր են այսպիսի շփումները և դրանք որքան արդյունավետ գործիք են դատախազության համակարգի ճիշտ ընկալումն ապահովելու համար:

Հաջորդ ձեռքբերումն այն էր, որ մենք ոչ միայն որդեգրեցինք, այլև գործնականում ապացուցեցինք, որ դատախազության համակարգը չի կարող զնալ ընտրովի արդարադատության ճանապարհով և օրենքով նախատեսված հիմքերի ու առիթների առկայության դեպքում արձագանքելու է հանցագործության դեպքի վերաբերյալ յուրաքանչյուր հայտարարության: Ի դեպ, այդ մոտեցումը իշխում է նաև ոստիկանության համակարգում. նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ 2021թ. ոստիկանությունում գրանցվել է հանցագործությունների վերաբերյալ հազարավորների անհամեմատ ավելի մեծ քանակ, ընդ որում, գրանցվել են նույնիսկ այնպիսիները, որոնց բացահայտման հավանականությունը դատախազաքննչական տեսանկյունից կարելի է գնահատել խիստ ցածր, ինչը սովորաբար հանդիսանում է հանցագործության դեպքը քաղցնելու հիմնական պատճառներից մեկը: Արտաքին ոլորտում որոշակիորեն բարձրացել ենք դատախազության՝ որպես մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող մարմնի, դերն ու հեղինակությունը:

Ամենակարևոր արդյունքներից է նաև դատախազության գործունեության՝ նախադեպը չունեցող իրապարակայնությունը. գրեթե յուրաքանչյուր գործով հանրությանը տրամադրվում է տեղեկություն, որը վկայում է համակարգի՝ բաց աշխատելու մտադրության մասին: Այս գործելաճը ինքնապատասխան չէ, այդպես էլ մենք ոչ միայն փորձում ենք ապահովել հասարակության՝ տեղեկացված լինելու իրավունքը, այլև թույլ ենք տալիս այս կամ այն իրավիճակում հետևել դատախազության մոտեցումներին և պատժողական քաղաքականությանը:

Արտաքին դիտանկյունից չնկատվող աշխատանքները կատարվում են համակարգի ներսում: Դատախազության համակարգը պետական այն մարմիններից է, որը երկար տարիներ կառուցվածքային լուրջ փոփոխությունների չէր ենթարկվել, աշխատանքի ծավալի ու դրա արդյունավետության գնահատումն էլ կատարվել: Կան դատախազներ, որոնք տասը տարուց ավելի զբաղեցնում էին միևնույն պաշտոնը, ընդ որում՝ առաջխաղացման մոտիվացիայի լիակատար բացակայության պայմաններում, իսկ սա ուղիղ հարված է դատախազական աշխատանքի արդյունավետությանը: Այո, պետք է ընդունել, որ համակարգը որոշակիորեն քարացած էր և չէր ապահովում ամենօրյա ռեժիմով ու արագ տեմպով զարգացման հրամայականը, որը պետք է դրված լինի նման համակարգերի գոյության հիմքում: Համակարգային նման փոփոխություններն ու ծրագրերը մշտապես զուգորդվում են ժամանակ ու համբերատարություն պահանջող և աշխատանքով և առաջին օրից առայսօր կատարվել ու շարունակվում են իրականացվել համակարգի բարեփոխումների ծրագրի իրագործմանն ուղղված մեծածավալ ու ժամանակատար աշխատանքներ: Ընդհանրապես օրենքի արդարությունը, նախաքննությունը շարունակվում և ընթանում է իր հունով: Քիչ առաջ պատահական չնշեցի, որ այսօր իրավապահ մարմինները ամեն քայլափոխի հանդիպում են պատերազմի հետևանքով պայմանավորված բազմաթիվ խոչընդոտների ու բարդությունների: Ես մի պարզ, բայց բավականին համոզիչ օրինակ բերեմ. որևէ գործով կարևոր վկայի հայտնաբերելու համար իրավապահները կարող են օրերով, երբեմն շաբաթներով որոնողական աշխատանքներ կատարել, որից հետո պարզվի,

որ այդ վկան ՅՅ-ում է: Դրանից հետո որոնողական աշխատանքները կարող են շարունակվել նաև ԱՅ սահմաններից դուրս, ինչից հաջորդում են վկային Արցախ հրավիրելու կամ ՅՅ իրավապահների միջոցով նրան ՅՅ-ում հարցաքննելու քննչական գործողության կազմակերպման աշխատանքները: Իսկ սա լրացուցիչ ու տևական ժամանակ է պահանջում: Ես նշեցի մեկ դեպքի մասին, մինչդեռ նմանատիպ օրինակները բազմաթիվ են:

- Պարոն Ներսիսյան, դատախազության կողմից քրեական գործ էր հարուցվել նաև սահմանադրական կարգի տապալման դեպքի առթիվ, սակայն հանրության մոտ այնպիսի կարծիք կա, որ այդ գործով քննությունը և ձևական բնույթ է կրում: Ի՞նչ կարող ենք ակնկալել այդ գործով, մասնավորապես որ ՅՅ քրեական օրենսգրքի մույնաբովանդակ հոդվածը ՅՅ Սահմանադրական դատարանի կողմից արդեն իսկ ծանաչվել է հակասահմանադրական:

- Յուրաքանչյուր քրեական գործով դատախազությունից առաջնահերթ անհրաժեշտ է ակնկալել լրիվ, օբյեկտիվ ու բազմակողմանի քննության ապահովում և օրինականության սահմաններում քրեական դատավարության առջև դրված խնդիրների լուծում: Երբ դատախազության գործունեության վերաբերյալ գնահատականները սկսում են տրվել նեղ-անձնական կամ քաղաքական դիտարկումներով, կամ երբ այն սկսում է դրական կամ բացասական գնահատվել ինչ-որ մեկի կամ ինչ-որ խմբի ցանկությունները բավարարվելու կամ չարդարանալու դեպքում, ապա մենք գործ ունենք ոչ թե իրական արդարադատության, այլ սեփական շահն սպասարկող իրավապահ համակարգի ակնկալիք ունեցող անձանց հետ: Դատախազությունը երբեք ուշադրություն չի դարձնելու նման հայտարարություններին, մենք պատրաստ ենք լսելու ցանկացած օբյեկտիվ քննադատություն, սակայն ոչ երբեք քաղաքական բնույթ կրող ինչ-որ շահարկումներ կամ ակնարկներ: Երբ հարուցվել էր Ձեր կողմից նշված քրեական գործը, ՅՅ քրեական օրենսգրքի մույնաբովանդակ հոդվածը դեռևս հակասահմանադրական ճանաչված չէր, և հարուցման պահին ԱՅ դատախազությունը բնավ էլ զբաղված չէր ՅՅ սահմանադրական դատարանի ապագա որոշման եզրափակիչ մասի կանխատեսումներով: Այստեղ կարևոր է այն գիտակցումը, թե որն է ընդհանրապես ցանկացած քրեական գործով քննության առարկան: Դրանք մի քանիսն են, սակայն առաջնայինը դեպքի ու դրա հանգամանքների պարզումն է: Քրեական գործի նախաքննության ներկա փուլում կատարվում են քննչական գործողություններ, որոնք միտված են պարզելու, թե արդյո՞ք ԱՅ բարձրաստիճան պաշտոնատար անձինք բավարար միջոցներ են ձեռնարկել 2020թ. սեպտեմբերի 27-ից Արցախի Հանրապետության հանդեպ սանձազերծված պատերազմի ընթացքում և դրանից հետո Արցախի տարածքային ամբողջականությունն ու ինքնիշխանությունը պաշտպանելու ուղղությամբ, կամ ովքեր են մեղավոր և պատասխանատու ԱՅ Սահմանադրության խախտման համար: Անկախ նրանից, թե ինչ մոտեցումներ կան Արցախի կարգավիճակի շուրջ արտաքին աշխարհում, մենք ունենք Սահմանադրություն, սահմանադրական մարմիններ, պաշտոնատար անձինք, որոնք պարտավոր էին և այսօր ևս պարտավոր են ենթարկվել ԱՅ օրենսդրությանը, ինչպես նաև պատասխանատու լինել օրենքներն ու Սահմանադրությունը խախտելու համար: Պատերազմն ավարտվելուց հետո շատերը գտնում էին, որ պետք է քննություն տարվի, որպեսզի պարզվեն պատերազմի հետևանքների պատասխանատուները, իսկ երբ նույն նպատակով դատախազությունում հարուցվեց քրեական գործ, հայտնվեցին մարդիկ, որոնք սկսեցին պնդել հակառակը կամ չհիմնավոր-

կարողություն, ինչը կարևոր նախադրյալ է դատախազական աշխատանքին մոր որակ հաղորդելու համար:

- Ձեր կողմից գլխավոր դատախազի պաշտոնը ստանձնելուց հետո դատախազությունում հարուցվել են քրեական գործեր պետական դավաճանության, ինչպես նաև պաշտոնատար անձանց կողմից պատերազմի օրերին բնակչության և գույքի տարհանման պարտականությունները ոչ պատշաճ կատարելու դեպքերի առնչությամբ, սակայն քրեական գործ հարուցելուց հետո մոր տեղեկություններ չեն հրապարակվել: Դժբախտաբար, կան մեկնաբանություններ, որ հիմնական նպատակը ընդամենը քրեական գործ հարուցելն էր ու այդ մասին հայտարարելը, արդյո՞ք դա այդպես է:

- Իրականում նման տպավորություն կարող է ձևավորվել միայն նրանց մոտ, ովքեր պատկերացում չունեն, թե ինչ է քննությունը, քրեական գործի նախաքննությունը: Եվ հետո, կան մարդիկ, ովքեր շատ հաճախ քննարկում կամ կարծիքներ են արտահայտում միայն իրենց հետաքրքրությունների շրջանակում գտնվող դեպքերի կապակցությամբ՝ անկախ պատճառներից: Մեկի մոտ դա քաղաքական նպատակ հետապնդող է, մյուսի մոտ՝ անձնական, մեկ ուրիշի մոտ՝ բացարձակապես այլ, մինչդեռ միևնույն մարմինը, որի համար դա աշխատանք ու զուտ իրավական հարց է, դատախազությունն է: Տեսեք, Դուք նշեցիք կոնկրետ գործեր, որոնք ըստ Ձեզ հետաքրքրում են հանրությանը, բայց իրավապահ մարմինները միայն այդ գործերով չէ, որ զբաղվում են: Յուրաքանչյուր օր տեղի են ունենում հանցագործություններ դեպքեր, երբեմն դրանք կարող են տասնյակների հասնել, և դրանցից յուրաքանչյուրը պահանջում է ոստիկանական, քննչական և դատախազական ուժեր ու անհատական աշխատանք: Ես սա ասում եմ նրա համար, որ հանկարծ տպավորություն չստեղծվի, թե Արցախի իրավապահ մարմինների առաջ դրված են միայն այդ քրեական գործերը: Անշուշտ, դրանք գտնվում են դատախազական հսկողության և ուշադրության ներքո, և դրանցում կա ամենօրյա քննչական ու դատավարական այլ գործողություններ են կատարվում ԱՅ քննչական կոմիտեի քննիչների կողմից:

### ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ված հայտարարություններով նսեմացնել այդ ուղղությամբ տարվող աշխատանքը: Ուզում եմ նաև շեշտել, որ իրականում շատ հարցեր կրում են խիստ իրավական բնույթ և իրավական գիտելիքներ չունեցող անձինք հաճախ ոչ թե դիտավորությամբ, այլ ուղղակի իրենց պատկերացումների շրջանակում սխալ եզրահանգումներ են անում: Դրանց թվին է դասվում նաև ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչվելու հանգամանքը: ՀՀ Սահմանադրական դատարանի այդօրինակ որոշման առկայությունը Արցախում չունի պարտադիր կիրառության որևէ հնարավորություն: Իհարկե, այն հուշում է, որ ԱՀ քրեական օրենսգրքի նույնանուն հոդվածի կիրառության ցանկացած փուլում Արցախում ևս կարող է բարձրացվել նույնպիսի հարց, սակայն իրավական առումով ԱՀ Գերագույն դատարանի՝ շեշտվող որոշման բացակայությունը թույլ է տալիս ԱՀ իրավապահ մարմիններին ԱՀ քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ենթադրյալ հանցագործության դեպքի առնչությամբ իրականացնել նախաքննություն:

Պետք է նաև ասեմ, որ սահմանադրական կարգը տապալելու դեպքի առնչությամբ քննվող քրեական գործի նախաքննության ընթացքում բացառված չէ հանցավոր այլ դեպքերի բացահայտման հնարավորությունը: Այդ պատճառով մենք շարունակելու ենք տվյալ քրեական գործով քննության առարկայի ամբողջական բացահայտումը: Իրավական գիտելիքների պակասի կամ դիտավորյալ գործելու մասին է խոսում նաև այն, որ տվյալ քրեական գործով ԱՀ նախագահին հարցաքննելուց հետո հրապարակային հարց էին հնչեցնում, թե ինչ կարգավիճակում է հարցաքննվել նախագահը, ակնհայտորեն ակնարկելով՝ արդյո՞ք կասկածայի կամ մեղադրյալի կարգավիճակ ունի: Այսպես՝ դիտավորության կամ անտեղյակության պատճառով փորձ էր արվում անտեսել ԱՀ Սահմանադրության 92-րդ հոդվածի դրույթները, որոնց համաձայն նախագահն անձեռնմխելի է և իր լիազորությունների ժամկետում ու դրանից հետո չի կարող հետապնդվել, պատասխանատվության ենթարկվել իր կարգավիճակից բխող գործողությունների համար, իսկ կարգավիճակի հետ չկապված գործողությունների համար՝ պատասխանատվության ենթարկվել իր լիազորությունների ավարտից հետո: Եվ ընդհանրապես, ես անգնահատելի արժեք եմ համարում ԱՀ Սահմանադրությունը, այդ իրավական փաստաթուղթն ունենալու համար և հանում դրա գործողության մեծ բազմաթիվ հայրեր, մայրեր, եղբայրներ ու քույրեր իրենց կյանքն են զոհաբերել: Կյանքում լինում են ծանր օրեր, այսօր Արցախն այդ օրերն է ապրում, բայց դա չի նշանակում, թե պետք է հետքայլ անել կամ նույնիսկ մտածել դրա մասին. մենք համոզվելու իրավունք չունենք, մենք պետք է ավելի ամրապնդենք ու կռնենք Արցախի Հանրապետության գոյությունը փաստող ամեն մի ինստիտուտ:

Ասեմ ավելին. գործի ելքով հետաքրքրված ու ԱՀ Սահմանադրության և օրենսդրության անշեղ կատարմամբ շահագրգռված յուրաքանչյուր ոք, ով ունի սահմանադրական կարգի տապալման դեպքի առթիվ հարուցված քրեական գործի քննության առարկային վերաբերող տեղեկություններ, կարող է դրանք նախաքննություն իրականացնող մարմիններ կայացնել որպես գնահատելի ապացույցներ: Սա է այն միակ ճանապարհը, որով կարելի է ցույց տալ այդ գործով օբյեկտիվ դիտորդի ու արդարադատության շահառուի կերպարը:

**- Քանի որ շատ են արցախյան վերջին պատերազմում ռազմական գործողությունների ժամանակ ենթադրյալ դավաճանությունների, մարտական դիրքերը լքելու, սխալ կազմակերպված գործողությունների մասին զանգվածային լրատվամիջոցներում և սոցիալական ցանցերում հրապարակումները, կուզենայինք իմանալ՝ արդյո՞ք ԱՀ դատախազությունը այդ կապակցությամբ անելիք ունի, թե՞ դրանք**

**քննության են առնվում ՀՀ իրավապահ մարմինների կողմից:**

- Ռազմական գործողությունների հետ կապված՝ նման դեպքերի վերաբերյալ հրապարակումները կամ հաղորդումները քննության են առնվում ՀՀ իրավապահ մարմինների կողմից:

**- Վերջերս դատախազությունը նկատելիորեն ակտիվ ու արագ է արձագանքում այն հանցավոր դեպքերին կամ որոնց վերաբերյալ հրապարակումներին, որոնք ենթադրաբար կատարվել են արդեթանցիների կողմից, սակայն չե՞ք կարծում, որ դա ձևական բնույթ է կրում, քանզի ԱՀ իրավապահ մարմինները չեն կարող, օրինակ, Արդեթանցի գինվորականին քրեական պատասխանատվության ենթարկել:**

- Դատախազական աշխատանքում ամեն ինչ ունի իր հերթականությունը, նպատակը և խնդիրները: Երբ տեղի է ունենում քրեադատավարական ստուգում պահանջող դեպք, առաջնահերթ ծագում է այն քննության առնելու համար դատավարական պայմանների ստեղծումը. հաղորդման գրանցում, քրեական գործի հարուցման փուլի կազմակերպում, քրեական գործի հարուցում և նախաքննության կատարում: Սրանք դատավարական գործողություններ են, որոնք պետք է կատարվեն առանց տարբերակման, թե ով է դեպքի հեղինակը: Նորից եմ ուզում կրկնել՝ անկախ Արցախի Հանրապետության կարգավիճակի միջազգային ընկալումից, Արցախը պետության բոլոր ինստիտուտները բովանդակող հանրապետություն է, որտեղ պետք է գործեն օրինականության այն կանոնները, որոնք այսօր հատուկ են աշխարհի բոլոր քաղաքակիրթ երկրներին: Նման դեպքեր, ի միջի այլոց, լինում են նաև եվրոպական երկրներում. հարուցվում են քրեական գործեր այլ պետության քաղաքացիների կողմից կատարված հանցագործությունների առնչությամբ, և, բնական է, նույնպիսի ընկալում պետք է լինի նաև մեր պարագայում: Եթե ասում ենք, որ տեղի է ունեցել հանցագործության դեպք, ապա դրան արձագանքելու միակ իրավական եղանակը քրեական վարույթ հարուցելն ու քննություն կատարելն է: Պետք է հաշվի առնենք, որ յուրաքանչյուր նմանատիպ դեպքում ունենում ենք տուժած քաղաքացի, որին պետք է պատասխանենք, թե վերջապես ով է մեղավոր և պատասխանատու իրեն գույքային վնաս կամ մարմնական վնասվածք պատճառելու համար, իսկ այս հարցերին հնարավոր է պատասխանել բացառապես քրեադատավարական քննությամբ: Ինչ վերաբերում է այն դեպքերին, երբ ենթադրյալ հանցավոր արարող կատարվել է աղբեղանական կողմից, ապա այստեղ ընդհանուր առմամբ գոյություն ունի սկզբունքային մեկ ճշմարտություն՝ աղբեղանական կողմը պարտավոր է քննության առնել ու պատասխանատվության ենթարկել իր քաղաքացիների կողմից կատարված հանցագործությունների դեպքերը: Հաշվի առնելով, որ մենք գտնվում ենք մեր ձևավորված իրողության պայմաններում, կարծում եմ, առավելագույն կարճ ժամկետում պետք է մշակվեն այն գործնական ու իրավական ուղիները, որոնց կիրառությամբ հնարավոր կլինի հասնել նրան, որ այդպիսի դեպքերի կապակցությամբ Արդեթանցի իրավապահ մարմինները քննություն իրականացնեն և հանցավորին ենթարկեն պատասխանատվության: Այլապես խաղաղ հարևանությամբ ապրելու մասին Արդեթանցի քաղաքական դեկլարության հայտարարությունները կմնան ու ենթակա կլինեն գնահատման սոսկ որպես հայտարարություն:

**- Վերջերս սոցիալական ցանցերում ինչոր հրապարակումներ եղան Ձեր վերաբերյալ, մասնավորապես, բանակում ծառայած չլինելու և գեներալ-լեյտենանտի կոչում ունենալու մասին, սակայն կարծես արձագանք Ձեր կողմից չկար: Ինչո՞վ էր դա պայմանավորված:**

- Ես ծնվել ու մեծացել եմ մի միջավայրում, որտեղ սովորեցրել են ծիշտ գնահատել սեփական ժամանակը: Հայրս արցախյան պատերազմների մասնակից ու երկարամյա գինվորական ծառայության թոշակառու է, որն ինձ սովորեցրել է կարգապա-

հույուն և կազմակերպվածություն կյանքի բոլոր իրավիճակներում՝ առանց բացառության: Ես հավատարիմ եմ այդ խորհուրդներին և փորձում եմ ընդհանրապես ժամանակ չծախսել այնպիսի երևույթների վրա, որոնք հատկապես արդի պայմաններում հանդիսանում են մանիպուլյատիվ հնարքներ: Բացի այդ, եթե մեծ քաղաքներում նման երևույթներին արձագանքելը պարտադիր պայման է, քանզի սուտ հայտարարություններով կարելի է մարդկանց շատ արագ հեղինակագրվել կամ կեղտոտել, ապա Արցախն այդ առումով բացառիկ է, քանի որ այստեղ մարդիկ կամ իրար ճանաչում են, կամ ընդամենը թույլ են տալիս պետք ճանաչելու համար: Ուստի, եթե մի բան խոսվեց կամ գրվեց, ապա արդարապես կարիք չկա, բոլորը գիտեն՝ դա ճիշտ է, թե ոչ: Ինչ վերաբերում է Ձեր նշած հրապարակումներին, ասեմ, որ կյանքում նման իրավիճակում հայտնվել եմ երկու անգամ. երբ գլխավոր դատախազի պաշտոնում իմ թեկնածությունը ներկայացվել էր ԱՀ Ազգային ժողով, և երբ դատախազության համակարգում մեկնարկեցիմ կարգային ու կառուցվածքային փոփոխությունների համար իմիք համընդհանուր աշխատանքները: Կարծում եմ, դա բավարար է երևույթի պատճառների պարզությունն ու ակնհայտությունը գնահատելու համար: Պարզ և ակնհայտ է նաև այն, որ ես գեներալ-լեյտենանտ չեմ, որը գինվորական կոչում է, իսկ դատախազությունում գինվորական կոչումներ չկան: Գլխավոր դատախազն ունի «Դատախազության մասին» ԱՀ օրենքով նախատեսված՝ արդարադատության երկրորդ դասի պետական խորհրդակցի դասային աստիճան, որն ըստ օրենքի նվազագույն չեմն է: Դասային աստիճան ունեն նույնիսկ դատախազության աշխատակազմի ծառայողները, նրանք հոգինվորական կոչում չունեն: Ակնհայտ է, որ նման կերպ պարզապես փորձ է արվել անգրագետ հնարքով վնաս հասցնել իմ հեղինակությանը, բայց, կրկնում եմ, ես արցախյան հանրությանը անծանոթ ու անհայտ դեմք չեմ և դրա շուրջ ծավալվելու կարիք բոլորովին չունեմ:

Ինչ վերաբերում է պարտադիր ժամկետային գինվորական ծառայությանը, առողջական խնդիրներով պայմանավորված՝ օրենքով սահմանված կարգով ես ազատվել եմ ծառայությունից և Արցախի պետական ծառայության ավարտելուց հետո անմիջապես աշխատանքի անցել Մարտակերտի շրջանի դատախազությունում: Այս առնչությամբ հարկ եմ համարում նշել, որ մշտապես ունեցել եմ այն համոզմունքը, որ արցախյան համար հայրենիքին ծառայելու միակ ձևը ժամկետային գինվորական ծառայությունն է: Մարդ կարող է պարտադիր գինվորական ծառայություն անցնել և հետո ամբողջ կյանքում քանդել ու ավերել հայրենիքը...: Իհարկե, ցանկալի է նաև հայրենիքին մատուցել այդ ծառայությունը ու կրել այդ պատիվը, բայց շատ կարևոր է նաև այդպիսի ծառայություն մատուցած չլինելու պարագայում մշտապես ապրել այնպես, որ երբեք հայրենիքին նվիրվածության թերաբժեքության զգացում չունենաս հողունը: Թեև չեմ սիրում նման թեմաների շուրջ խոսել, այդուհանդերձ, պետք է ասեմ, որ ես սերված եմ մի ընտանիքից, որի բոլոր անդամները ծառայել ու այսօր էլ ծառայում են Արցախի Հանրապետությանը՝ այդ ճանապարհին զուսպ և խոնարհ հաղթահարելով կյանքի գրեթե անլուծելի թվացող բազմաթիվ խոչընդոտներ: Հայրս արցախյան երեք պատերազմների մասնակից է, եղբայրս՝ վերջին երկու (վերջին պատերազմի վիրավոր), իսկ ես թե՛ արհիլյան պատերազմի ժամանակ և թե՛ 2020թ. սեպտեմբերի 27-ից առ այսօր կատարում եմ ինձ բաժին հասած ծառայությունն ու աշխատանքը, որի մասին բարձրաձայնելու անհրաժեշտություն չեմ տեսնում: Պետք է նաև ասեմ, որ ընդհանուր առմամբ ես շատ հանգիստ եմ վերաբերվում քննադատություններին, այդ թվում՝ նման պատվիրված հրապարակումներին: Ընդհանրապես մենք միմյանց հանդեպ հանդուրժողականության պակաս ունենք: Ես կփորձեմ դա լրացնել սեփական օրինակով:

**- Նախքան ԱՀ գլխավոր դատախազ ընտրվելը Դուք դասավանդում էիք Արցախի պետական համալսարանում, հիմա համատեղում եք գիտամանկավարժական աշխատանքը, և համալսարանի հետ տևական շփումը արդյո՞ք Ձեզ տվել է դատախազության համար որակյալ կադրեր ընտրելու առավելություն:**

- Մեծ ցավով պիտի ասեմ, որ 2021թ. փետրվար ամսից ստիպված եղա համարյա նվազագույնի հասցնել դասախոսական գործունեությունս: Արցախի պետական համալսարանում դասախոսել եմ 2015թ.-ից և կարճ ժամանակում հանգզվել, որ ամենալավ աշխատանքը ուսուցչի, դասախոսի աշխատանքն է: Ես երբևէ և որևէ այլ տեղ չեմ ստացել այն էներգիան, այն ապրումներն ու հույզերը, որ համդիպել են համալսարանում: Չնայած զբաղվածությանս, այդուհանդերձ, կապը համալսարանի հետ պահպանում եմ, տարբեր հարցերով հաճախակի եմ ինձ մոտ գալիս ուսանողներս, որոնց հետ ունեցել և մինչ հիմա պահպանում եմ անասհման բաց և ընկերական հարաբերություններ: Մերքս չթաքցնեմ, համալսարանի հետ կապը ինձ տվել է լավագույն կադրերի մեջ ընտրություն անելու հնարավորություն, արդեն ունեմ ուսանողներ, որոնք ընդունվել են աշխատանքի դատախազությունում: Ընդհանրապես ողջ դասախոսական գործունեությանս ընթացքում մասնագիտական գիտելիք փոխանցելուց բացի փորձել եմ ուսանողների գիտակցության մեջ արմատավորել մի կարևոր պնդում՝ երբեք չպետք է հենվել գիտելիք չունեցող «հաջողակների» օրինակի վրա և միշտ վստահ լինել, որ գիտելիքը մեր կյանքի միակ հավատարիմ ու անբաժանելի ուղեկիցն է: Կարծում եմ, ինձ դա հաջողվել է:

**- Անկեղծորեն պետք է ասեմ, որ այսօր Արցախի Հանրապետության դատախազության հանդեպ մեծ վստահություն և սպասում կա, ըստ Ձեզ, ինչո՞վ է դա պայմանավորված, և ի՞նչ կմաղթեիք արցախահայությանը:**

- Կարծում եմ, առաջին հերթին դա պայմանավորված է անկեղծության ու վստահության փոխադարձությամբ: Երբ մենք ձեռնարկում ենք բոլոր քայլերը հանրության հետ առողջ երկխոսություն ծավալելու և նրանց լսելու ուղղությամբ, իհարկե, սա աննկատ չի մնում: Երբ քաղաքացին բողոք է ներկայացնում դատախազություն, վիճարկում է դատախազի որոշումը, և դատախազությունը ընդունում է սեփական որոշման անհիմն կամ սխալ լինելը ու քայլեր ձեռնարկում իր սխալն ուղղելու ուղղությամբ, ոչ թե համառորեն պնդում հակառակը, քաղաքացին դատախազությունը սկսում է ընկալել որպես պետական մարմին և ոչ թե գերատեսչական շահ հետապնդող համակարգ:

Երբ մարդիկ մտնում են դատախազության շենք և պարզագույն վերաբերմունքում հոգատարություն ու աջակցություն զգում, ձևավորվում է այն վերաբերմունքը, որի մասին Դուք նշեցիք: Ես ներկայացրի այս օրինակները նրա համար, որպեսզի հասկանաք, թե որքան կարևոր է անձամբ ինձ ու նաև դատախազական ողջ համակարգի համար հանրային վստահության մթնոլորտում աշխատելը: Ես բազմաթիվ անգամ հայտարարել, հիմա ևս կրկնում եմ՝ արդարադատությունը որակյալ ու արժեքավոր է, եթե գուրկ է հանրային հուզականությունից, զգացմունքայնությունից ու թելադրված չէ հանրային պահանջատիրությանը ու պատվերով: Իսկ դա հնարավոր է, եթե արդարադատություն ապահովող մարմինները վայելում են հանրության վստահությունը:

Արցախահայությանը մաղթում եմ աստվածակուռ ամրություն: Մենք ունեցել ենք դաժան օրեր և մերօրյա արհավիրքները ևս արժանապատվորեն կհաղթահարենք: Ընդամենը պետք է լինենք միասնական ու համախմբված, միմյանց ձեռք մեկնող ու աջակցող:

**- Ընդհանրապես արցախյան հարցադրույթի համար:**

80 ՏԱՐԻ ԱՌԱՋ

# ՈՉ ՈՔ ՉԻ ՄՈՌԱՑՎԵԼ, ՈՉԻՆՉ ՉԻ ՄՈՌԱՑՎԵԼ...

Ինչպես է սկսվել Հայրենական մեծ պատերազմը:

Նախ՝ որպես նախաբան: 2020թ. սեպտեմբերի 26-ին Ստեփանակերտի վերանվանման հերթական տոնակատարությունն էր, որ կորոնավիրուսի պատճառով առաջիններից տարբերվում էր իր համեստությամբ:

Հիմնական միջոցառումները դիտելուց հետո գնացի Կրկման միջոցով աղջկաս՝ Մարգարիտայի տուն: Իրիկնադեմին բակի մեծ թեմնու տակ ընթրիքի էինք մատել, երբ Երևանից գանգեցին, որ Աստղիկ թոնուհիս երկրորդ տղան է լույս աշխարհ բերել: Մեր ընթրիքը վերածվեց խնջույքի: Փիշերը հանգիստ քնեցի, սակայն վաղ առավոտյան ինչ-որ պայթյունների ձայներից արթնացա: Աղջիկս տագնապահար հայտնեց. «Պա՛պ, կռև սկսա՛լ»: Մի պահ ինձ հավաքելով վերհիշեցի 80 տարի առաջ մորս նույնպես հայտնածը: 1941թ. հունիսի 22-ի առավոտյան մայրս, տուն գալով գյուղի աղբյուրից, կուժը ցած դնելով, լացակումած ասաց. «Իմ խեղճ խոխեք, տներս քանդվալա, կռև սկսալ...»:

Կեսօրին ամբողջ գյուղի մեծ ու փոքր բնակչությունը հավաքվել էր գյուղական խորհրդի և կոլվարչության գրասենյակների բակում: Պատշաճմբներում էին գյուղի ղեկավարները և մեր դպրոցի տնօրեն ընկեր Արշավիր Ավագյանը, որը, ժողովրդին հայտնելով պատերազմի սկսված լուրը, ասաց, որ ինքը որոշել է կամավոր գնալ ռազմաճակատ և հաջորդ օրը մեկնեց շրջկենտրոն Հաղուտ, գին-կոմիսարիատ, որտեղ բավարարեցին նրա խնդրանքը: 1941թ. ամռանը մեր գյուղը (Ազոխ) օրեցօր դատարկվեց տղամարդկանցից, իսկ սեպտեմբերի 5-ի երեկոյան երկու տասնյակ տղամարդիկ, որոնց թվումն էր հայրս, հավաքվել էին մեր հարևան Ամիրբար Ասրյանի տանը. հայրս՝ Հայրում Շահնազարյանը, և ուսուցիչներս՝ Մամիկոն Ասրյանը, Արմիկ Բաղդասարյանը, Արտաշես Պողոսյանը, Արտավազ Բաղդասարյանը, Դերունց Մեսրոպը (ազգանունը մոռացել եմ) և Նիկոլայ Բալասանյանը: Հաջորդ օրը գումարահովի ճվագի ուղեկցությամբ գյուղում այս խմբին ճանապարհեց:

Այսօր մտածում եմ, դպրոցական հասակում ուսուցիչներին եմ ճանապարհ դրել ռազմաճակատ: Իսկ ուսուցիչ դառնալով, երբ 65 տարեկան էի, աչքիս առաջ 1991-1994թթ., 87-ում՝ 2016թ. ապրիլյան քառօրյա պատերազմին և 91 տարեկանում՝ 44-օրյա պատերազմին մի քանի տասնյակ աշակերտներ ու 3 փեսաներս ու 2 թոռներս մասնակցեցին Ադրբեյջանի կողմից մեզ պարտադրված պատերազմներին: Այսօր Հայրենական մեծ պատերազմի և Արցախյան 1991-1994թթ. ազատագրական պատերազմի մասին որոշ նյութեր կան, իսկ 2016թ. ապրիլյան քառօրյա և 2020թ. սեպտեմբերի 27-ից նոյեմբերի 9-ի 44-օրյա պատերազմների մասին ասես ոչ մի տող գրված չկա, որպեսզի մեր աշակերտներին և բնակչությանը հասցնենք: Հայրենական մեծ պատերազմի ավարտից հետո տասնյակ տարիներ մենք թե՛ դպրոցում աշակերտներին և թե՛ բնակավայրերում բնակչությանը ասում ենք, որ այդ պատերազմը սկսվել է հանկարծակի, իսկ այսօր դասագրքե-

րում գրված է. «Գերմանիան 1941թ. հունիսի 22-ին, խախտելով 1939թ. օգոստոսի 23-ին ԽՍՀՄ-ի հետ կնքած չհարձակման պայմանագիրը, հարձակվեց ԽՍՀՄ-ի վրա»: («Հայոց պատմություն», 12-րդ դասարան, էջ 14): Լավ է, որ այսպես գրված է, բայց ինչպե՞ս սկսվեց պատերազմը: Այդ ի՞նչ հանկարծակիություն, ի՞նչ «բլից կրիգ» էր: Ինչո՞ւ այն ժամանակին չբացահայտվեց ու չխափանվեց: Բացենք շատերի համար անհայտ փակագծերը: Այս հարցի պատասխանը տալու համար ինձ օգնության եկավ Հայրենական մեծ պատերազմի վեոթերան, պաշտոնաթղ սպա, իմ նախկին ուսուցիչ Արտավազ Բաղդասարյանը իր «Այսպես սկսվեց 1941-1945թթ. Հայրենական մեծ պատերազմը» հոդվածով: Եվ այդ օրվանից ես առաջնորդվել եմ դրանով՝ դասաժամումս ժամանակ բացառելով «հանկարծակի» արտահայտությունը ու այստեղ, իմ թղթապանակումս արթությամբ եմ պահում այդ հոդվածը, որում գրված է. «1941թ. հունիսի 22-ին վաղ առավոտյան ֆաշիստական Գերմանիան առանց պատերազմ հայտարարելու ուխտադրժորեն «Դորտունդ» ազդանշանով հարձակվեց ԽՍՀՄ-ի վրա՝ իրականացնելով «Բարբարոս» պլանը, որի ստեղծման վրա Հիտլերն ու Վերմայտի գեներալներն աշխատել էին նախընթաց ամբողջ տարում, տպագրել պլանի 9 պատճեն, որից 3-ը «հույժ գաղտնի» մակագրությամբ տրվել է 3 գործադրականատարների, իսկ մնացածը փակվել է Հիտլերի չիրկիզվող պահարանում»:

Ահա թե՛ ինչպես սկսվեց: Պատերազմի նախօրեին սահմանամերձ 5-րդ բանակի շտաբի պետ, գեներալ Դ.Ս. Պիսկարևսկին ժամանակին գեկուցեց Մոսկվա Գլխավոր շտաբ, որ գերմանական ֆաշիստներն օրեցօր ուժեղացնում են իրենց խմբավորումները մեր սահմանների երկայնքով և որ վերջերս սկսել են վերացնել իրենց սահմանում կառուցված ինժեներական բոլոր արգելափակումները: Նրանք տենդորեն արկեր ու ավիացիոն ռումբեր են կուտակում ու դարձնում գետնի վրա, որը նշանակում է՝ երկար պահելու նպատակ չունեն: Հարձակման պետք է սպասել ամեն իրագույն, իսկ մեր զորքերը դեռ գտնվում են մշտական տեղակայման վայրերում: Սահմանի երկայնքով պաշտպանական դիրքեր զբաղեցնելու համար նրանց հարկ կլինի մի քանի օր: Գլխավոր շտաբում ստացվել է նաև 26-րդ բանակի շտաբի պետ՝ գեներալ Ի.Ս. Վերենկովի զեկույցը. «Ֆաշիստները հարձակման համար ելման դիրքեր են նախապատրաստում»:

Մոսկվայից նրանք ստացան կարծ պատասխան. «Անշուշտ, սահմանի այն կողմում տիրող դրության մասին Մոսկվայում ավելի լավ գիտեն: Մեր բարձրաստիճան ռազմական հրամանատարությունը միջոցներ է ձեռնարկելու»: Այդ պատասխանին հաջորդեց ՏԱՍՍ-ի հաղորդագրությունը, որը հերքում է ֆաշիստների ագրեսիվ մտադրությունները [լուրերը՝ որպես ամեն մի հիմքից զուրկ: Հաղորդումից ուղիղ 7 ժամ հետո գեներալ Ֆեդյունինսկին Գլխավոր շտաբին հաղորդել է, որ բանակի մոտ է անցել ֆաշիստական դասալիք (հարբած վիճակում հարվածել է սպային և վախեցել, որ կդատեն ու կզնդակահարեն): Նա հայտնել է, որ ֆաշիստական բանակը կներ-

խուժի հունիսի 22-ին ժամը 3-ին (արևմտյան սահմանի ժամանակով): Եվ ի՞նչ: Մոսկվայից նրան պատասխանել են, որ «զուր եք տագնապ ազդարարում», դա «պրովոկացիա» է: Իսկ Ռիխարդ Ջորգեն ուղղակի հայտնել է, որ «Դորտունդ» տագնապը կհնչի հունիսի 22-ին, ժամը 4-ին: Ստալինը և ողջ գլխավոր հրամանատարությունը մինչև վերջին րոպեն հույս են ունեցել խուսափել պատերազմից, նույնիսկ չեն հավատացել, որ այն կսկսվի: Միայն ներխուժման գիշերը զորքերին շտապ հրամաններ են ուղարկել՝ գաղտնի կերպով կրակակետեր գրավել սահմաններում: Այլ միջոցներ ձեռնարկել արգելվում է: Այն նույն Ֆեդյունինսկուն (վերոնշյալից 3 ժամ հետո) Մոսկվայից հրամայվում է. «Տագնապով ոտքի հանել զորքերը, բայց զինամթերք չբաժանել»: Դա այն դեպքում, երբ թշնամին արդեն Պերեմիշլի հատվածում է (մեր 5-րդ և 26-րդ բանակների դեմ) տեղակայել հրաձգային դիվիզիա: Հարձակման պահից «Հարավ» բանակախմբի հրամանատար՝ ֆեդյունարշալ Ռունշտեդը 5-րդ բանակի դեմ մարտի մեջ է մտցրել 10 հետևակային և 4 տանկային դիվիզիաներ՝ պահեստում ունենալով 6-րդ դաշտային բանակը և Կլեստի տանկային խումբը: Իսկ մերոնց հրամայվել է՝ «Այլ միջոցներ ձեռնարկել արգելվում է» կամ էլ՝ «զինամթերք չբաժանել»: Այդ նույն ժամանակ գեներալ Պոպովը հայտնում է, որ ավիացիայի հարձակումներն անսպասելի են, իսկ գեներալ Ռոկոտովսկին իր զորքին հրամայել է կոտրել գեներալի պահեստի դռները և զինվել, քանի որ պահեստապետը հանգստյան օրը գործի չէր եկել: Այդ ժամանակ Արևմտյան հատուկ զինվորական օկրուգի ռեպրեսիայի ենթարկված հրամանատարին փոխարինել է ոմն Դ. Պավլով, որը նոր էր կապիտանի կոչումով եկել Իսպանիայի կռիվից (և հանկարծ՝ գեներալ): Հունիսի 21-ի երեկոյան հանգիստը անց էր կացնում Մինսկի սպայական տանը, դիտում էր «Հարսանիք Մալինովկայում» ներկայացումը: Թշնամին պետք է հարձակվեր: Հետախուզության պետ Ս.Վ. Բլոխինը հասնում է ակունք և մի կերպ մտնում է կառավարական օթյակ, թեքվում Պավլովի ակամեջին, ինչ-որ բան ասում նրան:

- Չի կարող պատահել: Դատարկ բան է, ասում է Պավլովը, ցուցամատով ցույց տալիս բեմում տեղի ունեցողը և մատը դնում շուրթերին (լռություն): Ներկայացումից 2,5 ժամ հետո գերմանական ռմբակոծիչները հարված են հասցնում մեր 66 օդանավակայանների և ոչնչացնում խորհրդային 1200 ինքնաթիռ, որից 800-ը՝ գետնի վրա, դեռ օդ չբարձրացած: Լուսադեմին թշնամու 3 կորպուս զգալի թվով տանկերի և ավիացիայի աջակցությամբ գրոհեց մեր սահմանամերձ ստորաբաժանումների վրա: Ֆաշիստական դիվիզիաների առաջին հարվածն ուղղված էր սահմանապահ ուղեկալների և ամրացրած շրջանների փոքր կայարանների դեմ, որտեղ դեռևս չէին ավարտվել պաշտպանական աշխատանքները: Մերոնք մարտնչում էին հերոսաբար, չէին նահանջում, բայց թշնամին առաջ էր շարժվում: Ահա այդպես էր սկսվել Հայրենական մեծ պատերազմը, որ երկար ժամանակ համարում էինք հանկարծակի: Այդ ժամանակ Մինսկի մոտ շրջափակվել և գերի էր վերցվել

ավելի քան 300 հազարանոց խմբավորում, իսկ Կիևի մոտ՝ 600 հազարից ավելի: Ինչո՞ւ: Որովհետև մեր դաշտային կանոնադրությունը ուղղակի դոգմատիկ էր, բացառվում էր մեր հողը թշնամու ներխուժման հնարավորությունը, մշակված չէր շրջափակումից խոշոր ուժերի դուրսբերման հարցը: Կարմիր բանակը ռազմական տեսակետից անպատրաստ էր, թույլ էր սպառազինությունը, քանակով քիչ էր, ցածր էր ավտոմատ զենքի արտադրությունը. երկրում չկար ավտոմոբիլային արդյունաբերություն: Մենք 1941թ. ունեցել ենք ընդամենը 8 հազար ավտոմոբիլ, իսկ այդ նույն ժամանակ ԱՄՆ սենատը որոշել է ավտոմոբիլների արտադրությունը կրճատել մեկ միլիոնով, որովհետև չէին վաճառվում: Մեր թնդանթերը ռազմաճակատում քաշում էին ծիրով, իսկ զորքը տեղաշարժվում էր ոտքով: Շորերը, ոտքերը վնասվում էին, չէին կարողանում շարժվել, չէր հերիքում գեներալ: Դրիմում մեր 390-րդ դիվիզիայի զինվորը գեներալ տեր էր դառնում իր ընկերոջ գոհվելուց հետո: Չկար ռադիոկապ: Բանակն օգտվում էր կապի լարային միջոցներից, իսկ լարը ռմբակոծությունից փչանալով կտրվում էր կապը: Չկային բավարար բանակի տանկիստներ: Տանկ վարողներ կամ մեխանիկներ էին նշանակվում նախկին տրակտորիստները: Տանկը մարտի էր ուղարկվում, երբ այն վարվել էր ընդամենը 1 կամ 2 ժամ: Դրությունը վատ էր մաս ավիացիայում: Գերմանիայի հարձակման օրը մեր օդաչուները օդ էին բարձրանում, երբ ընդամենը 10-ական ժամ էին ինքնաթիռ վարել: Իսկ Կիևյան օկրուգի օդաչուները 4-ական ժամ էին օդում եղել, այն դեպքում, երբ ԱՄՆ-ում օդաչուն եթե 150 ժամից պակաս է լինում օդում, մարտին մասնակցելու իրավունք չէր տրվում, էլ չեն ուզում ասել, թե 1937թ. ինչպես է զլխատվել մեր բանակի բարձրաստիճան հրամանատարությունը: Դրան գումարած ճապոնիան Արևելքում, Թուրքիան Հարավ-Արևմուտքում հրամանի էին սպասում ճեղքել ԽՍՀՄ սահմանը: Պատերազմի բոլոր ծակատներում հերոսաբար էին մարտնչում հայ ռազմիկները, որոնց թիվը 671 հազար էր, ոչ թե 200, 300, 400 կամ 600 հազար, ինչպես գրված էին հայոց պատմության դասագրքերում: Այդ 671 հազարից շուրջ 90 հազարը ԼՂԻՄ-ից և Հյուսիսային Արցախից էր, որոնց մասին առանձին հոդվածում պետք է գրել, քանի որ 1000 մարդու հաշվով մեր մարզից տվածին հավասարը ոչ մի հանրապետություն չունեն: Էլ չեն խոսում մեր գեներալների ու մարշալների, խորհրդային մյուս հերոսների մասին, որոնցից յուրաքանչյուրի կենսագրությունը մի պատմություն է, բայց և հպարտությամբ եմ գրում, որ պատերազմի տարիներին ցուցաբերած սխրանքի համար ԽՍՀՄ հերոսի կոչում է շնորհվել 109 հայի և Հայաստանում ծնված կամ ապրած 11 այլազգիների (մեկական ուկրաինացի, հույն, ատրի, թուրք և ադրբեջանցի), ծևավորված է եղել 6 հայկական դիվիզիա, որոնց մարտական ուղին հերոսական է:

**Մառլեն ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ**  
**Մշակույթի վաստակավոր աշխատող,**  
**անհարական թոշակառու**

## ՄԵՆԵ ՄԻ ԺՈՂՈՎՈՐԳ ԵՆԸ

Այսօր ես ուզում եմ ամոթանք տալ այն հայերին, ովքեր համարձակվում են ասել, թե Արցախը մեզ պետք չէ: Ես անձամբ եմ լսել հեռուստացույցով որոշ կանանց բերանից Արցախում ապրող ժողովրդի հանդեպ ատելության խոսքեր: Ես մանկավարժ եմ և այս 3 պատերազմների ժամանակ կորցրել եմ 60-ից ավելի իմ աշակերտներին և դա՛ ընդամենը մի գյուղից: Բայց չեք հասկանում, թե Արցախը որքան հերոս տղաներ է կորցրել, ու համարձակվում եք ասել, թե մեզ Արցախը պետք չէ: Դուք չեք հասկանում, որ Արցախը

Հայաստանի դարպասն է: Մենք՝ արցախցիներս, այս 3 պատերազմների ընթացքում ապրել ենք ահ ու սարսափի մեջ, իսկ դուք ամոթի խոսքեր եք շարունակում մեր հասցեին: Դուք չեք հիշում բանաստեղծ Շիրազի խոսքերը.

*Ինչքան էլ որ բալիկիս պես  
Դու էլ մնաս կռվախնձոր,  
Շիրազն ասաց, աշխարհ անցնի,  
Հայ գալիք ես, հայ՝ Ղարաբաղ:*

Հայաստանում ապրող հայեր, մի՛ լարվեք մեր դեմ, մենք էլ

ձեզ նման հայ ժողովուրդ ենք, մի՛ լարվեք մեր դեմ և մի՛ ասեք, թե Արցախը Ադրբեյջան է: Դա մահացու հարված է մեզ համար: Մենք հույս ունենք, որ մեր ինքնորոշման հարցը քաղաքակիրթ աշխարհը ճիշտ կլուծի և չի թողնի բարբարոս ցեղի տիրապետության տակ: Իսկ մենք միայն միասնական ուժերով կհաղթահարենք մեր ծանր վիճակը:

**Սեդա ԲԱԴԱՍՅԱՆ**  
**գ. Թաղավարդ**



ԸՆԹԱՅԷ

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԼԱՎ ԵՆ



Ավարտվել է միասնական բուհերի ընդունելության քննությունների առաջին հիմնական փուլը: Ի՞նչ արդյունքներ են գրանցվել. մեկնաբանում է ԱՅ ԳԹԿ տնօրեն Յուրի Քարամյանը: Ըստ առարկաների ու բացասական, միջին, լավ, գերազանց շեմերի արդյունքները ԳԹԿ տնօրենը ընդհանուր առմամբ լավ համարեց: Բոլոր առարկաներից արդյունքները անցյալ տարվա համեմատ պահպանվել կամ ավելի լավ են: Գիշտ է, անցյալ տարվա համեմատությամբ դիմորդների քանակը 500-ով նվազել է, բայց արդյունքները ներկայացվում են տոկոսային հարաբերությամբ: Այսպես, «Հայոց պատմություն» առարկայից 0-7,25 միավոր, որը բացասական չեմ է, նախորդ տարի ստացել էր դիմորդների 59 %-ը, այս տարի՝ 33 %-ը: Ինչպես տեսնում ենք, դեպի լավը կտրուկ աճ կա: Նույնն էլ գերազանցի՝ 18-20 միավորի շեմի դեպքում է: Նախորդ տարի 7% էր, հիմա՝ 19%:

«Հայոց լեզու» առարկայից դրական միավորների շեմը չի հաղթահարել դիմորդների 30 %-ը, անցյալ տարի՝ 42 %-ը: «Ֆիզիկա» առարկայից երկու անգամ նվազել է բացասական միավորների շեմը. անցյալ տարի դրական գնահատականների շեմը չէր հաղթահարել 46 %-ը, այս տարի՝ 23 %-ը: Նախորդ տարվա համեմատ անբավարարների քանակը 4 %-ով նվազել է մաթեմատիկա առարկայից: Ռուսաց լեզվից այդ հարաբերակցությունը 22/7 է:

Ջարմանալի է, բայց փաստ, համավարակի պատճառով առցանց ուսումնական գործընթացի պայմաններում, պատերազմական իրավիճակներում ուսման անկում չի գրանցվել: Յու. Քարամյանը վերստին հաստատեց իր մշտական միտքը. սովորել ցանկացող երեխան սովորում է ցանկացած պայմաններում:

Յու. Քարամյանը վերստին հաստատեց իր մշտական միտքը. սովորել ցանկացող երեխան սովորում է ցանկացած պայմաններում:

Հուլիսի 2-8-ը լրացուցիչ քննությունների փուլն է, որին կմասնակցեն այն դիմորդները, ովքեր հիվանդության կամ այլ պատճառներով հիմնական փուլին չեն մասնակցել:

Դրանից հետո ԳԹԿ-ն կանցկացնի դիմորդների մրցույթ: Ընդունվածների ցուցակները քննական կենտրոններում կփակվեն հուլիսի 15-ին: Այդտեղ նշված կլինեն կառավարության որոշմամբ հաստատված տեղերի քանակով ընդունվածների անունները: Հոծ գծով կանցատվի անվճար և վճարովի համակարգ ընդունվածների սահմանը: Մնացած հարցերն արդեն Հանրապետական ընդունող հանձնաժողովն է որոշում. ըստ այդմ, անվճար տեղերի քանակը կարող է ավելանալ պահուստային տեղերի հաշվին, կամ եթե բարձր միավորներ ստացած դիմորդների թիվն ավելի է, քան հաստատված տեղերի քանակն է:

Եթե 1-ին փուլով դիմորդը մրցույթից դուրս է մնացել, իր դրական միավորներով կարող է հավակնել այն մասնագիտությունների թափուր տեղերին, որոնցում իր հանձնած քննությունները համապատասխանում են այդ մասնագիտության քննական առարկաներին: Այս փուլում թույլատրվում է մինչև 6 մասնագիտության հայտ ներկայացնել, ի տարբերություն 1-ին փուլի, որտեղ միայն մեկ մասնագիտության համար դիմորդը կարող էր հայտագրվել: Թափուր տեղերի համար հայտագրումը կսկսվի հուլիսի 18-ից 26-ը: Այս դիմորդները նորից քննություն չեն հանձնի. նրանց ստացած դրական միավորների հիման վրա կատարվելու է թափուր տեղերի համալրում:

Այն հարցին, թե բողոքարկում եղե՞լ է, Յու. Քարամյանը պատասխանեց, որ մեկ տեխնիկական դեպքի համար կենսաբանությունից եղել է: ՀՀ հանձնաժողովը 1 միավոր է ավելացրել՝ հօգուտ դիմորդների: Որոշ դիմորդներ բողոքել են, որ առաջադրանքները դպրոցական ծրագրից դուրս են, սակայն այս հարցում Յու. Քարամյանը հաշվի է առել մասնագետների կարծիքը:

ՃԱՄԲԱՐԱՅԻՆ ԵՌՈՒՆ ՇՐՋԱՆ



Դպրոցականների համար բացվել է ճամբարային շրջանը: ԱՅ ԿԳՄՍ նախարարությունը Արցախի երեխաների համար կազմակերպում է տարբեր ուղղվածության ճամբարներ: Ինչպես տեղեկացնում է արտադպրոցական ծրագրերի բաժնի պետ Արմեն Պետրոսյանը, Բյուրականի աստղադիտարանում կազմակերպված մաթեմատիկական ճամբարում հունիսի 24-ից հուլիսի 2-ը քննությունների արդյունքներով ընդգրկվել է 16 աշակերտ՝ մաթեմատիկայի երկու ուսուցչի ուղեկցությամբ: Հանգստին զուգահեռ նրանց համար պարապմունքներ են անցկացրել Ռուսաստանից ժամանած գիտնականները:

Հուլիսի 1-ից 10-ը Դիլիջանում կազմակերպված «Արմաթ» տեխնոլոգիական ճամբարին մասնակցում է Արցախում գործող «Արմաթ» լաբորատորիաների լավագույն 45 աշակերտ՝ 3 խմբակավարների հետ միասին:

Հուլիսի 5-ից մեկնարկում է ԱՅ ԿԳՄՍՆ և ՊՆ համատեղ կազմակերպվող «Ասպետ» ռազմամարզական

ճամբարը: Երեք հերթափոխով ճամբարում կընդգրկվեն 11-րդ դասարանն ավարտած շուրջ 300 պատանիներ:

Արտադպրոցական ծրագրերի բաժնի պետը տեղեկացրեց, որ «Դասավանդիր, Հայաստան» հիմնադրամի հետ համատեղ պլանավորում են կազմակերպել երկու հերթափոխով հնգօրյա ցերեկային ճամբարներ Պատարայում և Ստեփանակերտի հ. 5 դպրոցի տարածքում, որոնց կմասնակցի 140 աշակերտ: Մեկնարկը կտրվի հուլիսի 26-ին:

Նախարարությունը ՀԲԸՄ-ի աջակցությամբ ՀՀ Կոտայքի մարզի Հանքավանի ճամբարում երկու հերթով 10-օրյա հանգստի կուրսերի Արցախյան պատերազմում զոհված, հաշմանդան հետ կորած, գերի ընկած զինծառայողների ընտանիքների 7-13 տարեկան 200 երեխաների:

Այթի ոլորտով հետաքրքրվող երեխաների համար նախարարության և «Ես» կրթական հիմնադրամի հետ համատեղ գործողություններ են մշակվում 6-9-րդ դասարանների 110 երեխաների համար օգոստոսի 5-ից Արցախում ճամբար կազմակերպելու ուղղությամբ:

Ա. Պետրոսյանի խոսքով՝ աշխատանքներ են ընթանում Արցախում տեղակայված ռուսական զորամիավորման հումանիտար արծազանքման կենտրոնի հետ Արցախի երեխաների համար այստեղ և ՀՀ մարզերում հանգստի և ժամանցային միջոցառումներ կազմակերպելու համար:

Սեփ. լրատվություն

ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԿԱՆ ԱՄՐԱՊՆԴԱՆԸ

Պատերազմական և ետպատերազմյան իրավիճակներով պայմանավորված՝ բնակչության հոգեկան ամրապնդմանն ու ապահովմանն ուղղված սոցիալ-հոգեբանական աջակցության ծառայություններ կներդրվեն Արցախում: Այդ մասին քննարկում է եղել օրերս ԱրԴՀ-ում կայացած «Ետպատերազմյան սինդրոմներ» թեմայով աշխատաժողովում, որին մասնակցում էին ՀՀ առաջատար մասնագետներ: ԵՊՀ սոցիոլոգիայի ամբիոնի ղոցենտ, Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիայի նախագահ Միրա Անտոնյանը գիտական հանրույթին է ներկայացրել «Հոգեկան առողջության պահպանման համակարգի ներդրումը Արցախում» հայեցակարգը, որը քննարկվել է նաև ԱՅ կառավարությունում և հավանության արժանացել: Հումանիտար՝ գրեթե չկանոնակարգվող գործընթացներից, որոնք, ըստ նրա, ավելի են խորացնում սոցիալական խնդիրները, պետք է անցում կատարել դեպի աջակցության կարիք զգացող խավի դիմակայության բարձրացում: Սոցիալական խնդիրները համալիր են: Հետևաբար, ջանքերը՝ ամեն սոցիալական խնդրի համար գտնել առանձին լուծում, ինչպես ցույց է տալիս պրակտիկան, մատնված են ծախսողման:

Ինչո՞ւ սոցիալ-հոգեբանական և ոչ թե բուն սոցիալական կամ բուն հոգեբանական աջակցություն, ինչպես ընդունված է Հայաստանում և այստեղ:

Ծրագրի ղեկավարի մեկնաբանմամբ՝ արագ պետք է մտածել Արցախում ինչպես օգնել ազգաբնակչությանը, որովհետև մենք ունենք անհամեմատ մեծ թիվ մարդկանց, որոնք սատարելու կարիք ունեն:

Սովորաբար մարդկանց օգնելու գործընթացը մենք պատկերացնում ենք որպես

նրանց դրամական, նյութական, հումանիտար և այլ օգնության ցուցաբերում: Բայց, ինչպես պարզաբանեցին, սատարելն այն է, որը ենթադրում է օգնել մարդուն՝ վերականգնելու իր կյանքի սովորական ռիթմը, որ կարողանա նորից գտնել այն հենման կետերը, որոնք իրեն ապրեցրել են միշտ: Մի խոսքով, օգնել մարդուն՝ իր խնդիրներն իր վերահսկման ներքո պահել:

Մարտ ամսից ասոցիացիան Արցախում է: Մ. Անտոնյանի խոսքով՝ ընտանիք առ ընտանիք ուսումնասիրություններ են կատարել, տվյալներ հավաքել, թե ինչ ուղղություններում պետք է ջանք ներդնեն: Ըստ նրա՝ մարդկանց կարիքները լուծելու համար նախ և առաջ անհրաժեշտ են մասնագետներ, և քանի որ Արցախում դրանք չկան, սկսեցին կարիքի պատրաստումից: Այս պահի դրությամբ 50 հոգի սոցիալական աշխատողի վերապատրաստում են անցել: Երկրորդ խումբը կսկսի նոյեմբերին, և կշարունակվի: Նախագծում նշված են ծառայությունների տիպերը, մարդկանց թիվը, նրանք ինչ կոմպետենտություն պետք է ունենան և այլն:

Առաջին մակարդակում համայնքային սոցիալական աշխատողներ են: Յուրաքանչյուր գյուղում պետք է լինի համայնքային սոցիալական աշխատող: Ներկայիս Արցախի պահպանված տարածքներում ընդհանուր առմամբ 172 այդպիսի մասնագետի կարիք կա:

Երկրորդ մակարդակում յուրաքանչյուր շրջանում սոցիալ-հոգեբանական աջակցության կենտրոն պետք է լինի, որտեղ կողք կողքի հոգեբանները և սոցիալական աշխատողները կաշխատեն այն դեպքերի հետ, որոնք համայնքային սոցիալական աշխատողների, ուսուցիչների ջանքերի արդյունք

ում լուծում չեն ստանա, քանի որ խնդիրներն ավելի խորն են և նեղ մասնագիտական աջակցության կարիք են զգում: Այս ծառայությունները կլինեն 4-ը, որ ակնկալում են ստեղծել մինչև տարեվերջ: 50 կլինիկական սոցիալական աշխատողներ կամ հոգեբաններ պետք կլինեն: Այս մարդիկ աշխատելու են և մոբիլ եղանակով՝ զնալ-զալով, և տեղում են մարդկանց ընդունելու: Ինչո՞ւ մոբիլ: Քանի որ հոգեբանի կամ կլինիկական սոցիալական աշխատողի ծառայություններ ստանալու մշակույթն Արցախում դեռևս ձևավորված չէ. սովորաբար մենք բարեկամական, հարևանական, իրար սատարելու մեր ընտանեկան սեփական կապիտալն օգտագործելով ենք մնան հարցերը լուծում: Եվ քանի դեռ չկա ֆորմալ ծառայության մշակույթը, ասոցիացիան ներդրում է ծառայություն, երբ ինքը կզգա այդ մարդու տուն և կաշխատի նրա հետ:

Ինչ վերաբերում է հանրապետական մակարդակին, ենթադրվում է ունենալ նեղ մասնագիտացված հոգեբանական ծառայություններ, ուր կուղղորդվեն այն անձինք, ովքեր 1-ին և 2-րդ մակարդակներում ինչ-որ պատճառներով լուծումներ չեն ստացել և կարիք կունենան վերականգնողական ավելի երկար աշխատանքի: Թե որ հիմքի վրա դա կարվի՝ գործող վերականգնողական կենտրոնի, թե առանձին կենտրոն կբացվի, ընթացքը ցույց կտա: «Դա նշանակում է կարիքի՝ փոքր, ամմիջական ծառայությունների մատուցում համայնքներում, կարիքի մի քիչ ավելի զգալի ծառայությունների մատուցում շրջանի մակարդակով, իսկ կարիքը երբ շատ խոր է, խնդիրներն արդեն բարդ են, նեղ մասնագիտացված ծառայությունների մատուցում:

Դա կոչվում է համակարգային մոտեցում, որը թույլ է տալիս լուծել խնդիրն այսօր, կանխատեսել խնդիրները վաղը և ունենալ լուծումներ հետագայի համար»,- պարզաբանեց Մ. Անտոնյանը: Արցախի ներկա վիճակը պահանջում է գործել արագ, ստեղծել արագ ծառայություններ, բայց այնպիսի քայլերով դա անել, որ վաղը էլ, մյուս օրն էլ դրանք պետքական լինեն:

Մարդուն օգնելը նոր պայմաններում, ստեղծված իրավիճակում նորից դառնալու սեփական կյանքի կառավարողը՝ պահանջում է հսկայական էներգիա, գիտելիք, հմտություն, մարդասիրություն, արվեստ: Հայեցակարգը ենթադրում է, որ կառավարության աջքը, ձեռքը, օգնությունը հասնում է յուրաքանչյուր գյուղ, յուրաքանչյուր բնակիչ:

Կառավարությունը հավանություն է տվել: Հիմա փնտրում են դոմորդների: Հայ կրթական հիմնարկությունը օգնել է անցկացնել վերապատրաստումները և ներդրել շարունակական կրթությունը: Այս գաղափարների մասին ասվել է «Ավորա» մարդասիրական նախաձեռնության հանդիպմանը և հավանության է արժանացել:

Իսկ ամենամեծ գործը, որ հեռանկարային ուզում են անել, հետևյալն է. ասոցիացիան բոլոր օգնող մասնագետներին՝ ուսուցիչներին, մանկապարտեզների դաստիարակներին, համայնքային ոստիկաններին, գյուղապետարանի վարչական աշխատողներին, լրագրողներին, բոլորին սովորեցնելու է առաջին հոգեբանական օգնության հմտությունները՝ մարդկանց օգնելու՝ բարձրացնելու դիմակայունությունը:

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՈՒՑՉԻՆ

ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԻ ՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՀԱՎԱՍԱՐՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Սկզբը՝ 11-12, 13-14, 15-16-ում

2^{|x^3-7x|} = 1 <=> |x^3-7x| = 0 <=> {x\_1=0, x\_2=sqrt(7), x\_3=-sqrt(7)}
cos(pi\*sqrt(x^2+9)) = 1 <=> pi\*sqrt(x^2+9) = 2pi\*n, n in N <=> sqrt(x^2+9) = 2n, n in N

Համակարգն ունի լուծում միայն n=2 դեպքում:

sqrt(x^2+9) = 4 <=> x = +/-sqrt(7)

Մնացած դեպքերում երկրորդ հավասարման արմատները բացարձակ արժեքով կամ մեծ կամ փոքր են sqrt(7)-ից:

Պատ.՝ x = +/-sqrt(7)

Ունենալով հավասարման լուծումը, դժվար չէ պարզել հետևյալ պնդումների ճիշտ կամ սխալ լինելը:

1. Հավասարման ձախ մասի արտահայտությունը կարող է ընդունել ցանկացած դրական արժեք:

Պնդումը սխալ է, քանի որ 2^{|x^3-7x|} >= 1:

2. Հավասարման աջ մասի արտահայտությունը չի կարող ընդունել բացասական արժեք:

Պնդումը սխալ է, քանի որ -1 <= cos(pi\*sqrt(x^2+9)) <= 1:

3. Եթե x\_0-ն արմատ է, ապա -x\_0-ն նաև արմատ է:

Պնդումը ճիշտ է, քանի որ հավասարման աջ և ձախ մասերը գույգ ֆունկցիաներ են:

4. Հավասարումը չունի ռացիոնալ արմատ:

Պնդումը ճիշտ է, քանի որ հավասարման արմատները իռացիոնալ թվեր են՝ x = +/-sqrt(7):

5. Հավասարումը համարժեք է cos(pi\*sqrt(x^2+9)) = 1 հավասարմանը:

Պնդումը սխալ է, քանի որ հավասարումը համարժեք է վերը բերված համակարգին:

6. Հավասարումն ունի ճիշտ երկու արմատ:

Պնդումը ճիշտ է, քանի որ հավասարման արմատները երկուսն են՝ x = +/-sqrt(7):

4. Ֆունկցիաների մոնոտոնության օգտագործումը.

y = f(x) ֆունկցիան կոչվում է X բազմությունում աճող (նվազող), եթե X բազմությունից ցանկացած x\_1 և x\_2 թվերի համար, եթե x\_2 > x\_1 տեղի ունի f(x\_2) > f(x\_1) (f(x\_2) < f(x\_1)) անհավասարությունը:

Ֆունկցիան, որը միայն աճում կամ նվազում է տվյալ միջակայքում անվանում են մոնոտոն տվյալ միջակայքում:

Օրինակ 15: Հետագոտել f(x) = x^3 - 3x ֆունկցիան մոնոտոնության առումով:

Լուծում: Դիցուք, a-ն և b-ն ցանկացած թվեր են, ընդ որում՝ b > a: Կազմենք f(b) - f(a) տարբերությունը և այն ձևափոխենք այսպես.

f(b) - f(a) = (b^3 - 3b) - (a^3 - 3a) = (b-a)(b^2 + ab + a^2 - 3)

Ակնհայտ է, եթե a-ն և b-ն [-1;1] հատվածի թվեր են, ապա |a| < 1, |b| <= 1: Ուստի a^2 < 1, ab < 1, b^2 <= 1 <=> a^2 + ab + b^2 < 3:

Նշանակում է՝ f(b) - f(a) < 0, այսինքն՝ f(b) < f(a), որը ցույց է տալիս, որ f(x) ֆունկցիան [-1;1] հատվածում նվազող է:

Այնուհետև, եթե a և b թվերը միաժամանակ պատկանում են (-inf; -1] կամ [1; inf) միջակայքին, ապա a^2 >= 1, ab > 1, b^2 > 1 <=> a^2 + ab + b^2 > 3:

Նշանակում է՝ f(b) - f(a) > 0, որտեղից՝ f(b) > f(a):

Դրանով էլ հիմնավորվում է, որ (-inf; -1] և [1; inf) միջակայքերից յուրաքանչյուրում f(x) ֆունկցիան աճող է:

Պատ.՝ [-1;1] հատվածում նվազող է,

(-inf; -1] և [1; inf) հատվածներից յուրաքանչյուրում՝ աճող:

Օրինակ 16: Լուծել հավասարումը.

log\_2^2 x + (x-1)log\_2 x = 6 - 2x

Լուծում: Այս հավասարումը համակցված է, քանի որ նրանում մասնակցում են երկու տարբեր ֆունկցիաներ՝ լոգարիթմական և գծային: Սովորական, ստանդարտ մեթոդներով այն լուծել հնարավոր չէ: Պահանջվում է այլ մոտեցում:

Հավասարման թԱԲ-ը (0; inf) բազմությունն է:

Հավասարման երկու կողմերին ավելացնելով (x-1)^2/4, կունենանք.

log\_2^2 x + 2 \* (x-1)/2 \* log\_2 x + (x-1)^2/4 = 6 - 2x + (x-1)^2/4

կամ

(log\_2 x + (x-1)/2)^2 = (x-5)/2 <=> |log\_2 x + (x-1)/2| = |(x-5)/2|

Այսպիսով հավասարումը բերվում է հետևյալ համախմբի լուծմանը

{log\_2 x + (x-1)/2 = (x-5)/2 <=> log\_2 x = -2 <=> {x = 1/4, log\_2 x + (x-1)/2 = -(x-5)/2 <=> log\_2 x = 3-x <=> log\_2 x = 3-x}

Համախմբի երկրորդ հավասարումը կարելի է լուծել գրաֆիկորեն: Այն ունի միակ լուծում, քանի որ (0; inf) միջակայքում y = log\_2 x ֆունկցիան մոնոտոն աճող է, իսկ y = 3-x ֆունկցիան՝ մոնոտոն նվազող (գրաֆիկները հատվում են մի կետում):

Անմիջական տեղադրմամբ դժվար չէ ստուգել, որ x=2 արժեքը այդ հավասարման լուծում է: Այսպիսով, հավասարման լուծումներն են 1/4 և 2 թվերը

Պատ.՝ 1/4; 2

Օրինակ 17: Լուծել հավասարումը.

log\_2(4x^2+1) = log\_2 x + 8x(1-x)

Լուծում: Հավասարման թԱԲ-ը (0; inf) բազմությունն է: Հավասարման մեջ առկա են տարբեր ֆունկցիաներ, այդ պատճառով էլ այն հնարավոր չէ լուծել ստանդարտ մեթոդներով: Կատարենք որոշ նախնական ձևափոխություններ: Նկատենք, որ

8x(1-x) = 2(4x-4x^2) = -2(2x-1)^2 + 2, 4x^2+1 = (2x-1)^2 + 4x

Հավասարումը նախ բերվում է

log\_2((4x^2+1)/x) = 8x(1-x)

տեսքի, այնուհետև՝

log\_2(((2x-1)^2)/x + 4) = -2(2x-1)^2 + 2

Դիտարկենք հավասարման աջ և ձախ կողմերի արտահայտությունները որպես ֆունկցիաներ՝

f(x) = log\_2(((2x-1)^2)/x + 4) և g(x) = -2(2x-1)^2 + 2

f(x)-ը աճող լոգարիթմական ֆունկցիա է: Այն սահմանափակ է ներքևից: Իրոք, քանի որ x > 0, ապա

((2x-1)^2)/x + 4 >= 4

անհավասարությունից հետևում է

log\_2(((2x-1)^2)/x + 4) >= log\_2 4 = 2

g(x)-ը քառակուսային ֆունկցիա է, սահմանափակ վերևից՝ -2(2x-1)^2 + 2 >= 2:

Որպեսզի տեղի ունենա f(x) = g(x) հավասարությունը, պետք է երկու ֆունկցիան էլ միաժամանակ ընդունեն 2 արժեքը:

{-2(2x-1)^2 + 2 = 2 <=> -2(2x-1)^2 = 0 <=> (2x-1)^2 = 0 <=> x = 1/2, log\_2(((2x-1)^2)/x + 4) = 2 <=> ((2x-1)^2)/x = 0 <=> x = 1/2

Հավասարման միակ արմատն է x = 0,5:

Պատ.՝ x = 0,5:

Օրինակ 18: Գտնել հավասարման արմատների քանակը

(2^x + sin x = 0) \* lg(1 + 5x^2 - x^4) = 0

Լուծում: Նախ գտնենք հավասարման թԱԲ-ը:

Լոգարիթմատակ արտահայտությունը պետք է լինի դրական՝

1 + 5x^2 - x^4 > 0

Նշանակենք x^2 = t, t >= 0: Անհավասարությունը կընդունի հետևյալ տեսքը.

t^2 - 1, 5t - 1 < 0

Քառակուսի եռանդամի գրոներն են՝ t\_1 = -0,5; t\_2 = 2: Հետևաբար, քառակուսային անհավասարման արմատների բազմությունն է -0,5 < t < 2: Հաշվի առնելով, որ t >= 0, կունենանք 0 <= x^2 < 2 <=> |x| < 2 <=> -sqrt(2) < x < sqrt(2)

Այսպիսով հավասարման թԱԲ-ը (-sqrt(2); sqrt(2)) միջակայքն է:

Որոշման տիրույթում տրված հավասարումը համարժեք է հետևյալ համախմբին.

{lg(1 + 5x^2 - x^4) = 0, 2^x + sin x = 0

Հետագոտենք համախմբի հավասարումներից յուրաքանչյուրը.

ա) lg(1 + 5x^2 - x^4) = 0 <=> 1 + 5x^2 - x^4 = 1 <=> 5x^2 - x^4 = 0

x^2 \* (5 - x^2) = 0 <=> {x^2 = 0 <=> x = 0, x^2 = 5 <=> |x| = sqrt(5) <=> {x = 0, x = +/-sqrt(5)}

Համախմբի առաջին հավասարումն ունի երեք արմատ:

բ) Հետագոտենք 2^x + sin x = 0 հավասարումը (-sqrt(2); sqrt(2)) տիրույթում:

Նշենք, որ sqrt(2) < 3/2 < 2 և (-sqrt(2); sqrt(2)) < [-pi/2; pi/2]:

Նշանակենք f(x) = 2^x և g(x) = -sin x: Այս ֆունկցիաներն անընդհատ են ամբողջ թվային ուղղի վրա: Ընդ որում, f(x) = 2^x ֆունկցիան աճող է ամբողջ թվային ուղղի վրա, իսկ g(x) = -sin x ֆունկցիան [-pi/2; pi/2] հատվածում, հետևաբար և (-sqrt(2); sqrt(2))

միջակայքում, մոնոտոն նվազող է:

Հաշվենք f(x) = 2^x և g(x) = -sin x ֆունկցիաների արժեքները (-sqrt(2)) և sqrt(2)

կետերում:

f(-sqrt(2)) = 2^-sqrt(2) = 1/2^sqrt(2) < 1/2; g(-sqrt(2)) = -sin(-sqrt(2)) = sin sqrt(2) > sin pi/6 > 1/2

f(-sqrt(2)) < 1/2 < g(-sqrt(2)); f(sqrt(2)) = 2^sqrt(2) > 0, g(sqrt(2)) = -sin sqrt(2) < 0 <=> g(sqrt(2)) < f(sqrt(2))

Այսպիսով f(x) և g(x) ֆունկցիաների գրաֆիկները (-sqrt(2); sqrt(2)) միջակայքում հատվում են միայն մեկ կետում:

Հետևաբար 2^x + sin x = 0 հավասարումը (-sqrt(2); sqrt(2)) միջակայքում ունի մեկ

արմատ:

Այսպիսով, տրված հավասարումն ունի 4 արմատ:

Պատ.՝ 4 արմատ

Ալեքսանդր ԽԱՀՏԱՐՅԱՆ Ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՄԵՆԵՐ

ՆՈՐԻՆ ՄԵՇՈՒԹՅՈՒՆ ՔԻՄԻԱՅԻ ՆԿԻՐՅԱԼԸ



Լինելով արեւելահայ եւ ողջ Կովկասյան տարածաշրջանի մշակութային խոշոր կենտրոն՝ Շուշին շատ-շատերին է ծննդյան վկայական տվել, այդ թվում եւ հայ քիմիկոս, ճարտարագետ, գյուտարար, քիմիական գիտությունների դոկտոր (1939), պրոֆեսոր (1939), ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս (1953), թղթակից-անդամ (1946), Լենինյան (1972) եւ երեք Ստալինյան (1943, 1948, 1950) մրցանակների դափնեկիր, գեներալ-մայոր (1949), Սոցիալիստական աշխատանքի հերոս (1966) Իվան Կնունյանցին, որի կուրծքը զարդարել են նաեւ Լենինի (1966), Յոկոնդայի (1966) հեղափոխության, Կարմիր դրոշի, Աշխատանքային Կարմիր դրոշի, «Կարմիր աստղ» շքանշանները:

Այս կոչումների շքերթի տիրակալը ծնվել է 1906թ. հունիսի 4-ին Լյուդվիգ Կնունյանցի՝ ինժեներ-նավթագործի ընտանիքում: Պատանեկության տարիներին Իվանն ապրել է Գրոզնիում, որտեղ հայրն զբաղվում էր նավթարդյունաբերությամբ. այդ ասպարեզում էլ կատարել է փականագործի աշխատանքներ՝ միաժամանակ սովորելով դպրոցում... Գետաբերասեր պատանին ոչ միայն լավ էր սովորում, այլև օգնում էր ընկերներին, կազմակերպված էր, սկզբունքային... Կնունյանցին գրավում էր ոչ միայն հոր մասնագիտությունը, այլև համակույր էին հեղափոխական-քաղաքական հայացքները, որով, կարելի է ասել, ներծծված էր գերդաստանի ուղին. բոլշևիկներ էին թե՛ հայրը, թե՛ հորեղբայրները, թե՛ հորաքույրը. վերջինս երեք հեղափոխությունների մասնակից էր եւ եղբայրների հետ հավասար պայքարում էր ինքնակալության տապալման համար: Իվանի մայրը՝ Ռոզա Կառլովնան, բժշկուհի էր, աշխատասեր, հոգատար անձնավորություն, այնպես որ, Իվանը ոտքն ամուր հողին դնելու բավականին լուրջ բազա ուներ, բայց եւ հավասարապես կրում էր ընտանիքի բեռը: Լինելով ակտիվ հեղափոխական՝ ցարական պահանջողական բաժանմունքի հետապնդումներից խուսափելու համար հայրը հաճախ էր քաղաքից քաղաք մեկնում, նրա հետ էլ՝ ընտանիքը: Վերջապես 1923թ. Լյուդվիգ Կնունյանցը հրավիրվում է Մոսկվա՝ աշխատանքի, եւ Իվանի համար ուսանելու եւ գիտությամբ զբաղվելու նոր հորիզոններ են բացվում: Հաղթահարելով ամեն տեսակ դժվարու-

թյուն՝ նա ընդունվում է Բաումանի անվան բարձրագույն տեխնիկական ուսումնարան, աշակերտում Ալեքսեյ Զիչիբաբինին, ու թեւեւ ուսումը վճարովի էր եւ խնդիրներ էր առաջացնում ընտանիքում, Իվանը 1928թ. փայլուն կերպով ավարտում է ուսումնարանը, ստանում ինժեներ-տեխնոլոգի որակավորում, պաշտպանում «Դիմեթիլամինոպիրիդինը եւ նրա ածանցյալները» դիպլոմային աշխատանքը: Սրան զուգընթաց՝ Ի.Ի. Ելինի ղեկավարությամբ Կնունյանցը բնական գազի վերամշակման թեմայով ներկայացնում է նաեւ դիպլոմային նախագիծ՝ «Սեղման-կլանման գազոլիմային գործարան՝ օրական 100 000 խորանարդ մետր գազի թողարկմամբ»: Կնունյանցը մնում է Զիչիբաբինի ամբիոնում՝ որպես ասպիրանտ, այնուհետեւ դասախոսում, իսկ 1932-ից սկսում է դասախոսել Կ.Ե. Վորոշիլովի անվան քիմիական պաշտպանության զինվորական ակադեմիայում, 1938-ից՝ դառնում ամբիոնի վարիչ, մինչ այդ՝ 1937-ին, պաշտպանում դոկտորական: Գետաբերասեր ու ջանադիր գիտնականը հասցնում է միաժամանակ ղեկավարել ԽՍՀՄ ԳԱ էլեմենտաօրգանական միացությունների ինստիտուտի լաբորատորիան, խմբագրել Դիմիտրի Մենդելեևի անվան համամիութենական քիմիական ընկերության ամսագիրը եւ ստանձնել Սովետական մեծ հանրագիտարանի «Քիմիա» բաժնի խմբագրության գլխավոր խմբագրի պարտականությունը: 1938-1954 թթ. աշխատում է ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի օրգանական քիմիայի ինստիտուտում: 1954-ից մինչեւ կյանքի վերջը՝ 1990թ., ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի տարր-օրգանական միացությունների լաբորատորիայի վարիչն էր: 1949թ. ընտրվում է ԽՍՀՄ ԳԱ թղթակից-անդամ, 1953-ին՝ ԽՍՀՄ ԳԱ իսկական անդամ: Հայ ժողովուրդն այս առումով հպարտանալու տեղ ունի, քանզի տարբեր ասպարեզներում հայագի ԽՍՀՄ ԳԱ իսկական անդամներ են եղել այնպիսի գիտնականներ, ինչպես Աբրահամ Ալիխանովը, Աբել Աղամբեկյանը, Անուշավան Արզումանյանը, Քրիստափոր Բաղդասարյանը, Կամո Դեմիրճյանը, Նիկողայոս Ենիկոլոյանը, Արմեն Թախտաջյանը, Հովհաննես Իսակովը, Վսեվոլոդ Լազարյանը, Տիգրան Խաչատուրովը, Վիկտոր Համբար-

ծունյանը, Էգրաս Հասրաթյանը, Յուրի Հովհաննիսյանը, Հակոբ Մանանդյանը, Անդրեյ Միքայելյանը, Նորայր Միսակյանը, Ստեփան Միտարյանը, Յուրի Օսիպյանը, Լեոն Եւ Հովսեփ Օրբելիները... Իվան Կնունյանցը ֆտորօրգանական միացությունների քիմիայի հիմնադիրն է ԽՍՀՄ-ում, հայկական եւ արտասահմանյան մի շարք գիտական ընկերությունների անդամ, հիմնադրել է Դ.Ի. Մենդելեևի անվան համամիութենական քիմիական ընկերությունը: Մշակել է նոր մոնոմերների, ջերմակայուն պոլիմերների եւ դեղագործական պրեպարատների արդյունաբերական սինթեզի եղանակներ: Համարվում է ֆտորօրգանիկների գիտական դպրոցի հիմնադիրը: Գետազոտություններ է կատարել ֆտոր-ծծմբաօրգանական եւ հետերոցիկլիկ միացությունների ասպարեզում, նրա ջանքերով իրականացվել է Ե. Վիտամինի ստացման ելանյութերից մեկի արտադրության եղանակը: Մասնագիտական ընդգրկումը շրջանակներն են եղել՝ օրգանական քիմիա, քիմիական արդյունաբերության տարաբնույթ խնդիրներ, քիմիական ռեակցիաների մեխանիզմներ, դեղանյութեր, սինթետիկ մանրաթելեր, ներկանյութեր, սպիտակուցի քիմիա, ժառանգականության քիմիական հիմունքներ եւ այլն: Քիմիայի գունավոր աշխարհը Իվանը լրացնում է նաեւ նկարչական գույներով եւ ոչ միայն նկարում, այլև վերականգնում է XVI-XIX դարերի դասական նկարիչների գործերը, որոնցից մեկի մասին հաճույքով պատմում են գրեթե բոլորը:

Ամեն ինչ սկսվեց 1963 թվականից, երբ նա Լենինգրադին մերձ անտառներից մեկում շրջագայելիս հյուրընկալվել է անտառապահի տնակում: Ջրույցն ուղեկցվել է թեյախմությամբ:

Անտառապահը թեյամանը դրել է խունացած, փոքր-ինչ անսովոր տեսքով տախտակ-դրոցի վրա, ինչը չի վրիպել քիմիկոսի աչքից: Անսովոր Կնունյանցի խնդրանքին՝ անտառապահն այդ «անպետք» տախտակը նվիրել է նրան: Մի քանի ամիս անց Կնունյանցն իր իսկ պատրաստած լուծիչների խառնուրդով մաքրել է տախտակի մակերեսը: Երբեմնի խունացած, առաջին հայացքից սովորական փայտի մի կտոր հիշեցնող այդ տախտակը 17-րդ դարում ստեղծագործած հողանդացի նկարիչ Իորիս Վան Սոնի գլուխգործոց նատյուրմորտն է: Վերականգնված այդ տախտակի մակերեսին հիմա թափանցիկ ու նուրբ երանգներով ուրվագծվում են խաղողի խոշոր հատիկներ, դեղձեր, գավաթում փայլվող գինին, ծովային բազմաոտ խեցեգետինը:

Հոլանդացի նկարչի ստեղծագործություններից ԽՍՀՄ-ում շատ քիչ են եղել: Երմիտաժում նրա կտավներից միայն մեկը կա:

Իվան Կնունյանցի տքնաջան աշխատանքի շնորհիվ այդ տախտակն ազատվեց դարերի խավար շերտից և հնարավոր դարձրեց դրանով հիանալ միլիոնավոր մարդկանց: Վերականգնման առաջին աշխատանքը բախտորոշ եղավ գիտնականի համար: Քիմիական լաբորատորիայից վերադառնալիս նկարների վերականգնումը կարծես նրա երկրորդ մասնագիտությունը դարձավ:

Աշխատանքը խթան է դառնում, որ նա լրջորեն զբաղվի նաեւ վերականգնողական արվեստով, որի շնորհիվ կենդանություն առան XVI դարի իտալացի նկարիչներ Սանտի Դիտիտոյի «Տիրամայրը մանկան հետ», Ջովաննի Ֆրանչեսկո Գվերչինոյի (1591-1666) «Ծերուկը եւ պատանին», Ֆրանսիացի նկարիչ Պիեռ Պոլ Պյոյուդոնի (1758-1823) «Աղջկա փոքրիկ դիմանկար» կտավները եւ շատ այլ արժեքավոր գործեր:

Անհրաժեշտ լուծիչ ընտրելու համար վերականգնողը շատ հաճախ ստիպված է լինում բարդ ու տքնաջան հետազոտական աշխատանք իրականացնել: Նախ անհրաժեշտ է պարզել, թե տվյալ նկարն ինչ ներկերով է նկարված, ինչպիսին է կտավի բնույթը: Նշենք, որ արվեստում կտավն այն գործվածքն է, որի վրա ստեղծվում է յուղաներկ (սակավ՝ սոսնձաներկով, տեմպերայով) գեղանկարչական աշխատանք: Կարևոր մի հանգամանք է պետք է նկատի ունենա վերականգնողը: Ինչպիսի՞ն է կտավի այն շերտի բաղադրությունը, որը պետք է հեռացվի դրա վրայից: Հին նկարների վերականգնման արվեստը կատարողից, ինչպես և սպասվում է, պահանջում է մեծ գիտելիքներ, համբերություն և կամք:

Իվան Կնունյանցը զարմացնում է նաեւ կահույքագործներին՝ վերականգնելով XVIII-XIX դարերի կիսաքայքայված հին կահույքների մուշկեր: 1984թ. Կիեւում ռուսերենով լույս տեսած «Քիմիկոսներ» կենսագրական բառարանի շուրջ 1200 քիմիկոսներից 8-ը հայեր են, որոնց թվում է Իվան Լյուդվիգի Կնունյանցը, որն իր մանկավարժական գործունեության արդյունքում պատրաստել է 10 գիտությունների դոկտորների, 50 թեկնածուների եւ հարյուրավոր ինժեներ-քիմիկոսների, որոնք Կնունյանցին գնահատում են որպես աշխույժ, արագաշարժ, խռովահույզ եւ առաջին իսկ բառերից ուշագրավ, որի դասախոսությունները զարմացնում էին գիտելիքների խորությամբ, շարադրության պարզությամբ, ոգեշնչությամբ... Եթե խոսենք թվերով, ապա պետք է նշել, որ Կնունյանցը շուրջ 500 գիտական աշխատությունների հեղինակ է, տիրապետել է 300 հեղինակային վկայականների եւ բազմաթիվ արտասահմանյան արտոնագրերի:

*խոսք հիշատակի*

## ԳՐԵՍԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը խոր կսկիծով հայտնում է ԱՀ վաստակավոր մանկավարժ Գրետա Ավետիսյանի մահվան լուրը:

Գրետա Ավետիսյանը ծնվել է 1936 թվականին Ասկերանի շրջանի Կարմիր գյուղում: Նախնական կրթությունը ստացել է գյուղի դպրոցում, որն ավարտելուց հետո ընդունվել է Բաքվի մանկավարժական ինստիտուտ: Երկար տարիներ քիմիա է դասավանդել Ստեփանակերտի հ. 7 դպրոցում: Աշխատել է նաև նախարարությունում՝ որպես քիմիայի առաջատար մասնագետ:

Կյանքի վերջին տարիներին դասավանդել է հարազատ Կարմիր գյուղի դպրոցում՝ իրականացնելով տարիների մասնագիտական փորձը ծննդավայրի կրթօջախի սաներին ծառայեցնելու մեծ ցանկությունը:

Պարգևատրվել է մի շարք մեդալներով, իսկ 2006 թվականին արժանացել է վաստակավոր մանկավարժի պատվավոր կոչման:

Գրետա Ավետիսյանը ուսուցչական համայնքի կարկառուն ու սիրված դեմքերից էր, հանրապետության մասշտաբով՝ քիմիայի լավագույն մասնագետներից: Լինելով բարձրակարգ մասնագետ, իսկական մանկավարժ և հրաշալի մարդ՝ վայելել է իր աշակերտների և գործընկերների սերն ու հարգանքը: Քիմիան նրա տարերքն էր, և այդ սերը նա հաջողությամբ փոխանցել է իր աշակերտներին, որոնցից շատերը դարձել են լավագույն մանկավարժներ ու բժիշկներ:

ԱՀ ԿԳՄՍ նախարարությունը վշտակցում և իր զորակցությունն է հայտնում անվանի մանկավարժի հարազատներին ու մտերիմներին:

**168. am**

ՀՅՈՒՄԱՐԱԿ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀՋՈՐ ԶԵՆՔ, ՈՒՍՈՒՑԻՉԸ՝ ԶԻՆԿՈՐ



«Լուսարար»-ի գրուցակիցը կրթության փորձագետ, վերապատրաստող ուսուցիչ, «Գլոբալ Բրիջ» կրթահամալիրի կրթական ծրագրերի համակարգող, մանկավարժ ԱՐՄԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԷ:

«Ի՞նչ եք կարծում, կրթության միջոցով հասարակությանը դեպի լավը տանելու մեխանիզմն այսօր օգուտ կբերի՞» երկրում ստեղծված իրավիճակի հետ կապված:

Մեր երկիրն այժմ լրջագույն մարտահրավերների առջև է կանգնած: Գրեթե բոլոր ոլորտները կաթվածահար վիճակում են, իսկ դրանից դուրս գալու միակ ելքն ազգային համախմբումն է, մեր ներուժը ճիշտ օգտագործելը և ամեն բան ամելիս մեր ավելի լավ ապագան պատկերացնելը: Քաղաքական որևէ հարցի չեն ուզում անդրադառնալ...

Այս ամենի համար անչափ կարևոր է կրթության դերը: Հենց մարդու մտածողության փոփոխության միջոցով ենք մենք հասնելու ոչ թե մտացածին, այլ իրական հաջողությունների: Մեր երկրում, ցավոք, կրթության մակարդակը դեռևս հեռու է բավարար լինելուց: Մարդու մտավոր ներուժի բացահայտումը, դրա ճիշտ ուղղորդումը, ազգային արժեքների նկատմամբ անկեղծ ու անշահախնդիր վերաբերմունքը ձեռավորվում են հենց դպրոցում: Իմ կարծիքով, մեր կրթությունը պետք է ընդգծված ազգային բնույթ ունենալ՝ հաշվի առնելով մեր երկրի առանձնահատկությունները: Իհարկե, այդ ամենը պետք է համադրել միջազգային կրթական փորձի լավագույն ձեռքբերումների հետ: Մի միամիտ միտք է հաճախ շրջանառվում, թե հունամիտար, հասարակական առարկաների փոխարեն պետք է դպրոցներում դասավանդել միայն ճշգրիտ գիտություններ, ֆիզիկական դաստիարակություն, ռազմագիտություն, ռոբոտիկա և այլն, քանի որ մենք պատերազմական երկիր ենք: Ես սա համարում եմ խիստ միակողմանի և անհեռանկար մոտեցում: Նախ՝ ազգային արժեքները երեխայի մեջ սերմանվում են հենց հունամիտար առարկաների միջոցով, իսկ բնագիտամաթեմատիկական առարկաները զարգացնում են երեխայի մտահորիզոնն այլ ուղղությամբ: Սրանք ոչ թե հակադրելի, այլ համադրելի երեույթներ են: Այսինքն՝ նախ պետք է ազգային նկատմամբ

ծեւավորել վերաբերմունք, իսկ հետո այդ վերաբերմունքն ինքն իրեն վերածվում է հայրենասիրության, հող ու ջրի նկատմամբ նվիրումի եւ սիրո:

2020 թվականի 44-օրյա պատերազմի ընթացքում ոտնահարվել է Արցախի 24.000 աշակերտների կրթության իրավունքը: Չբացառենք նաև, որ շատերը սթրես են տարել ու տանում են: Ի՞նչ կասեիք այս հարցի վերաբերյալ:

Այո, Արցախի երեխաների տարրական իրավունքները ոտնահարվեցին: Հնարավորություն են ունեցել այս ամենն ասելու նաև ԱՄՆ դեսպանատան ներկայացուցիչն, ԵՄ դեսպանին, տարբեր հարթակներով բաց նամակներ են հղել միջազգային համրությանը: Նշել եմ, որ իրենց աչքի առջև ոտնահարվում են երեխայի տարրական իրավունքները, իսկ իրենք այդ ամենի լուռ վկան են... Մեր ազգը վտանգի պահին համախմբվելու բացառիկ շնորհ ունի: Այս ամբողջ էլ բացառություն չէ: Բոլորը լծվել էին արցախցի ընտանիքներին տեղավորելու գործին, հնարավորինս արագ լուծվեց նաև նրանց կրթության շարունակականության հարցը: Նրանք տեղավորվեցին 33 տարբեր շրջանների դպրոցներում, կամավորական ուսուցիչների, հոգեբանների խմբեր էլ աշխատեցին նրանց հետ: Թե՛ համրակրթական, թե՛ մասնավոր դպրոցները սիրով ընդունեցին երեխաներին, ամեն բան արեցին, որ նրանք ոչ մի բանի կարիք չունենան: Պետք էր տեսնել, թե ինչ սիրով ու ջերմությամբ էին հաստատանքի երեխաները դիմավորում իրենց արցախցի հայրենակիցներին: Իմ դասավանդած խմբերում էլ կան արցախցի փոքրիկներ: Բոլորը շատ պայծառ, խելացի, ուժեղ երեխաներ են: Նրանցից շատերը շուտով վերադառնալու են իրենց հայրենի տուն, հաճախելու են իրենց դպրոցները: Երեխաները կարողություն են իրենց տանը, դպրոցին: Իսկ այն ընտանիքները, որոնք մնալու են ՀՀ-ում կամ Արցախի այլ բնակավայր են տեղափոխվում, պետք է պետության հոգածության տակ լինեն: Պետք է մտածել նախ այդ ընտանիքների աշխատանքի, սոցիալական այլ հարցերի մասին, իսկ դպրոցներում ամեն բան արվում է, որ երեխաների կրթության իրավունքը չտուժի:

Ի՞նչն է պակասում կրթության ոլորտում, որը գերխնդիր է այսօր:

Կրթության ոլորտում, ըստ իս, առաջին հերթին բացակայում է տարբերակված մոտեցումը: Կարելի էր տեսնել «կրթություն» կյանքի համար» սկզբունքը: Տպավորությունն այնպիսին է, թե մենք ուզում ենք բոլորին նույն մարդը դարձնել: Տարիներ շարունակ ստիպողաբար «անցնում» են տարբեր առարկաներ, անցնում են ու գնում առաջ՝ հաճախ նույնիսկ առանց մեկ երեույթ հասկանալու այդ դասից: Մեր կրթությունը խիստ տե-

սական է ու երեխային չի պատրաստում կյանքի իրական մարտահրավերներին, չի մղում հասկանալու, վերլուծելու, գնահատելու իրենց արած աշխատանքը, բացահայտելու իրենց ներուժը, հասկանալու՝ ինչ կարող են ավելի լավ անել, ինչ անել, որ հանրային բարիք ստեղծեն: Իհարկե, մասնավոր դպրոցներ կան, որտեղ երեխաները փայլուն կրթություն են ստանում, բայց դրանք եզակի օրինակներ են, իսկ ընդհանուր առմամբ, անելիքներ դեռևս շատ կան: Հույսով, որ մեր ղեկավարները կհասկանան, որ հաղթանակի հասնելու առաջին պայմանը կրթության որակի բարելավումն է, եւ խիստ գործնական քայլերի կանցնենք: Պետք է ճիշտ օգտագործել նաև ուսուցչի ներուժը: Մեր դպրոցների մեծ մասը խարսխված է մի քանի փորձառու, բանիմաց ուսուցիչների վրա: Ես նկատում եմ, որ ուսուցիչների մեծ մասը պատրաստակամ է նոր բան սովորելու, ավելի անելու, սակայն դա իրագործելու համար չունի ուղղորդող, հաճախ չունի մոտիվացիա: Պետք է ուսուցչի կողքին լինել, խրախուսել, օգնել ավելի անելու հարցում: Ի վերջո, կրթական բարեփոխումների իրագործողն առաջին հերթին հենց ուսուցիչն է:

Կրթության արդյունավետության նոր մեթոդներ մշակել էք, որը որոշ չափով կփոխի կրթության մակարդակը ու որը, ըստ Ձեզ, ավելի լավը կարող է լինել, քան եղել է:

Ես դասավանդում եմ հայոց լեզու և գրականություն: Իմ փորձից կարող եմ ասել, որ առաջին հերթին աշխատում եմ իմ առարկայի նկատմամբ երեխայի վերաբերմունքի ձեւավորման ուղղությամբ: Եթե երեխան սիրում է առարկան, հասկանում դրա տրամաբանությունը, իր սովորածը, վերլուծում ձեռքբերումները, գիտակցում է, թե ինչ է սովորում և ինչու է սովորում: Ի վերջո, մեր նպատակը չէ բոլորին լեզվաբան, գրականագետ, քիմիկոս կամ ֆիզիկոս դարձնել, այլ երեխային տալ այն ամենակարևոր բանալիները, որոնք նա հետագայում կկիրառի իր ինքնահիարացման համար, այն, ինչ իրեն պետք կգա ողջ կյանքի ընթացքում, տրամաբանական այն առանձնահատկությունները, որոնք նա կկարողանա կիրառել նաև այլ ոլորտներում: Լեզվի դասավանդումն առումով խիստ կարելի էր մեծ գործնականությունը, բանավոր և գրավոր խոսքի կատարելագործումը: Հենց լեզվի միջոցով է ձեւավորվում մարդու ազգային լեզվամտածողությունը: Ամեն ինչ պետք է անել, որ հայ երեխան լավ տիրապետի հայոց լեզվին, հասկանա բառի արժեքը, կարողանա իր խոսքը ծառայեցնել իր ամենատարբեր կարիքների բավարարմանը:

Այս համատեքստում նաև ուսուցչի առաքելության մասին խոսեք, խնդրենք...

Լավ ուսուցիչը շատ կարևոր է յուրաքանչյուրիս կյանքում: Մեր կայացման բարդ շրջաններում շատ բան է կախված ուսուցչից: Նրանք կարող են մեզ ոգևորել ու հիասթափեցնել, սովորելու մղել կամ մեղմել այդ մղումը, բացահայտել մեր թաքնված շնորհները կամ արմատախիլ անել դրանք:

Երկի թե բոլորս էլ ունենք սիրելի ուսուցիչ, որից միայն ակադեմիական գիտելիք չէ, որ ստացել ենք:

Գաղտնիք չէ, որ մեր երկրում մանկավարժի աշխատանքը անկախությունից ի վեր այնքան էլ արժևորված չէ: Դպրոցների մեծ մասի կորիզը մի քանի ընտրյալ ուսուցիչներն են, որոնց ներուժի, մեծ նվիրումի վրա էլ խարսխված են դպրոցները: Իսկ մի զգալի մասը դառնում է ուսուցիչ, քանի որ այլ ոլորտներում չի կարողանում աշխատանք գտնել, և...

Եվ... ինչ-որ ժամանակաշրջանի մասին եք երազում:

Ես երազում եմ այն ժամանակաշրջանի մասին, երբ մեր երկրում մանկավարժ կաշխատեն միայն ընտրյալ մարդիկ, իսկ այդ աշխատանքը կվարձատրվի ըստ արժանվույն, ուսուցիչները կապրեն բարեկեցիկ ու արժանապատիվ, կլինեն հարգված ու արժևորված մտավորականներ հասարակության մեջ:

Ո՞վ է նվիրյալ ուսուցիչը:

Նվիրյալ ուսուցիչը մտավորական է, ազգի սերուցքը, հասարակության դավանած արժեհամակարգը ձեւավորող օղակներից մեկը: Շատ կարևոր է, որ դպրոցում չլինեն պատահական մարդիկ: Ես ուզում եմ, որ ուսուցիչ լինեն միայն այն մարդիկ, ովքեր մշտապես ինքնակրթված են կզբաղվեն՝ կարդալով, փնտրելով, մեթոդական նոր լուծումներ գտնելով:

Երազում եմ, որ ոչ միայն պետությունը կազմակերպի լուրջ ու տեղին վերապատրաստումներ կրթության լավագույն փորձագետների ղեկավարությամբ, այլև ուսուցիչն ինքը ձգտի ինքնազարգացման՝ ունենալով նյութական ապահովություն, մասնագիտական խանդավառություն և իր այդ սիրով ու նվիրումով վարակի երեխաներին: Առարկայի նկատմամբ սերն առաջին հերթին գալիս է ուսուցչից: Հետևաբար, իր մասնագիտությունը սիրող, ստեղծագործ, արժանապատիվ կյանքով ապրող ուսուցիչը կամա թե ակամա երեխաների առջև կբացի իր դասավանդած առարկայի հետաքրքիր աշխարհը:

Փառք ու պատիվ բոլոր այն ուսուցիչներին, ովքեր այս անմխիթար պայմաններում անգամ բարձր են պահում ուսուցչի կոչումն ու պատիվը: Նրանց պետք է աչքի լույսի պես պահել և մշտապես զուլխ խոնարհել նրանց կատարած աշխատանքի առջև:


Զրույցը Կովա ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆԸ

ՆՈՐ ԿԵՆՏՐՈՆԸ ՍԿՍԵԼ Է ԳՈՐԾԸ

Պոլ Էլյուար ֆրանկոֆոնիայի կենտրոնի պաշտոնական բացումը տեղի կունենա գալիք սեպտեմբերին: Բայց մինչ այդ կենտրոնը գործի մեջ է, և հունիսի 26-ին «Sunrise Stepanakert» մուլտիմեդիա արվեստի փառատոնի առաջին միջոցառմամբ տրվել է ծրագրի մեկնարկը: Դա ջրաներկով նկարչության վարպետության դասն էր Պետո Պոլսյանի հետ:

Ձեռնարկի հեղինակները սփյուռքահայ երկու երիտասարդներ են՝ բեյրութահայ Շուշան Քեշիշյանը և Սանկո Պետերբուրգում ծնված Լիլիթ Հակոբյանը: Երկուսն էլ ՀՀ սփյուռքի գլխավոր հանձնակատարի գրասենյակի նախաձեռնությամբ իրականացվող «Ի գործ» ծրագրի մասնակիցներն են:

«Sunrise Stepanakert» մուլտիմեդիա արվեստի փառատոնի նախագծի ղեկավար Շուշան Քեշիշյանը տեղեկացրեց, որ ծրագիրը ներառում է լուսանկարչական և թվային արվեստի ցուցադրություն, կինոդիտումներ, երաժշտական կատարումներ, ստեղծագործական վարպետության դասեր:



Մեր նպատակն է այս փառատոնով հարթակ տրամադրել տեղի արտիստներին ներկայանալու համար, ասում է Շուշանը, ինչպես նաև ցույց տալ, թե ինչպես են Հայաստանը, Արցախն ու Սփյուռքը միավորված Արցախի շուրջ: Ի դեպ, պարտադիր չէ, որ մասնակիցներն անպայման լինեն արվեստագետներ, նրանք կարող են և արվեստասեր լինել:

ԱՀ ԿԳՄՍ նախարար Լուսինե Ղարաբանյանը նախօրեին տեղի ունեցած կենտրոնի խորհրդանշական բացման արարողության ժամանակ խոսել է Արցախ-Ֆրանսիա բարեկամությունն ամրապնդելու և կրթամշակութային նոր մակարդակ սահմանելու մասին:

Բոլոր ցանկություն ունեցողները կենտրոնում կարող են շփվել, հաղորդակցվել ֆրանսիական մշակույթին: Կենտրոնը կունենա նաև տեխնոպարկ, ուր կհաճախեն տեխնիկական գիտելիքներ ունեցող երեխաները:

Նախարարը համոզմունք հայտնեց, որ կենտրոնը հնարավորություն կընձեռնի շփվել հայասեր Ֆրանսիայի հետ, և մեծ կլինի կիրառական, գործնական կապերով շփվելու հնարավորությունը: Նա ներկայացրեց փաստեր, որոնց համաձայն Ֆրանկոֆոնիայի ծրագրերով 150 հոգի սովորել և տիրապետում է ֆրանսերենին, մշակույթի, առողջապահության և կրթության ոլորտների հինգ մասնագետներ էլ վերապատրաստումներ են անցել Ֆրանսիայում: Նախատեսվում է նորից Ֆրանսիա ուղարկել բժիշկների, որտեղից նրանք Արցախ կբերեն ֆրանսիական գիտելիք, փորձը, հմտությունն ու կարողությունը:


Հունիսի 26-ից մինչև հուլիսի 17-ն իրականացվելիք բոլոր միջոցառումների մուտքն ազատ է լինելու: Կազմակերպիչները հուսով են՝ կենտրոնը կունենա մեծ թվով այցելուներ:

Վարդուհի ԲԱՂԱՍԱՐՅԱՆ



ԷՆՆԵՍ ԲԵԳԼԱՐՅԱՆ-85

ԱՐՄԱՏԸ ԶԳԱԾ ԺԱՅՈՒ ԿՐԾԻ ՄԵՉ



Յուլիսի 2-ին լրանում է արցախցի բանաստեղծ Էննեստ Բեգլարյանի 85-ամյակը: Տարեդարձ, որ կարող էր հորել-յարի ֆիզիկական ներկայությամբ նշվել: Բայց, ցավոք, 13 տարի է, ինչ նա հրաժեշտ է տվել երկրային կյանքին: Յինգ տարի առաջ զավակների՝ որդու և դստեր նախաձեռնությամբ Արցախի գրական ընտանիքի, մտավորականության այլ ներկայացուցիչների մասնակցությամբ, «Ես դեռ ողջ եմ» ստեղծագործությունների նորահրատարակ ընտրանու շնորհանդեսով ջերմ, մտերմիկ մթնոլորտում նշվեց նրա 80-ամյա հորելյանը, որը զեղեցիկ առիթ էր արժևորելու նրա անցած ուղին:

Գրչընկերները ընդգծել են Էննեստ Բեգլարյանի սրտառու քննարականությունը, համեստությունը, նվիրվածությունը հայրենի հողին, արմատներին, ընտանիքին, նրա իսկական արցախցի լինելը:

Ծնվել է 1936 թվականին Մարտունու շրջանի Չափ գյուղում: 1960թ. ավարտել է Երևանի անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտը: Երկար տարիներ աշխատել է ԼՂ գյուղատնտեսության

մարզային տարբեր կառույցներում, իր մասնագիտական կարողություններով ծառայել է երկրամասի տնտեսության զարգացմանը: Փորձն ու գիտելիքները փոխանցել է երիտասարդներին՝ դասավանդելով Ստեփանակերտի գյուղատնտեսական թղեջուղ: Նրանց սովորեցնում էր սիրել հայրենիքը, լինել հողի անխոնջ մշակ, իսկական նվիրյալ:

1988-1991 թվականներին աշխատել է Ասկերանի շրջանի «Կարմիր դրոշ» («Խաչեն», «Բերդ») թերթում՝ որպես գյուղաբաժնի վարիչ, լուսաբանել շրջանի գյուղատնտեսական կյանքը: Այդ ամենին զուգարդել է իր ստեղծագործական ոգորումները: Չեղինակել է բանաստեղծական մի քանի ժողովածուներ՝ «Արև և նարինջ», «Ձարթոնք», «Ուշացած խոստովանություն», «Չավատքի ոգին», «Չավատ և սեր» և, ինչպես ասացինք, «Ես դեռ ողջ եմ»:

Էննեստ Բեգլարյանի ստեղծագործություններն աչքի են ընկնում քննարական շնչով և թեմաների բազմազանությամբ: Չայրենի եզերքը նրա գրչի տակ ներկայանում է իր ողջ զեղեցկությամբ, իսկ քննարական հերոսը՝ ազնվությամբ, հավատարմությամբ, արդարամտությամբ, ճշմարտացիությամբ, կամքի ուժով, մի խոսքով, արցախցու բնավորության ցայտուն հատկանիշներով: Նրա բանաստեղծությունները կարճ են թե՛ չափի երգի պես, ինչպես դիպուկ նկատել է Մաքսիմ Գորկովի «Մեծերը» մեջ: Եվ այդ համառոտությունն ընթերցողին ստիպում է կանգ չառնել, շարունակել՝ ամեն անգամ նոր զեղեցիկ պատկերի, հետաքրքիր եզրահանգման, փիլիսոփայական ընդհանրացման սպասելով: Կարճ տողերի մեջ մի ողջ կյանք է ամփոփված, որում, սակայն, չի սպիանում որը մանկության վերջը: Բանաստեղծը մանուկ հասակում կորցրել է հորը, որը Չայրենական պատերազմից չի վերադարձել: Այդ կսկիծը նրան ուղեկցել է կյանքի բոլոր հատվածներում՝ քուն թե արթնի: Ուրիշ ժամանակներում ընթերցողին զուգե այնքան չտպալիորեր այս զգացումը, բայց այսօր էլ, երբ հազարավոր մանուկներ են զգում այդ կսկիծը, պարզապես չես կարող բանաստեղծի անմասկան ցավը ժողովրդական չհամարել:

Փորձենք Էննեստ Բեգլարյանի ստեղծագործական դիմանկարը ներկայացնել նրա բանաստեղծական տողերի միջոցով՝ նրա հետ մտնելով երևակայական գրույցի մեջ:

Ինչպե՞ս կրնուք գրել Ձեր անցած ուղին:

- Ես չբայելցի հարթ ճանապարհով: Թուփ ու մացառի հետ կռիվ տալով՝ Անցա իմ ճամփան... Դժվարությունը աչքիս քաղցրացավ, երբ ամեն քայլով ինձ բարձունք տանող ուղին կարճացավ...

- Քայլեր, իմ քայլեր... Թեկուզ եղել եք Դուք մերթ երերուն Ու մերթ համարձակ, Մերթ մի մատնաչափ, Մերթ էլ ընդարձակ, Սակայն չեք շեղվել Իսկական ճամփից Ոչ մի ժամանակ...

Իսկ ինքներդ Ձե՞զ...

- Համեստություն, Պարզ իմ աղբյուր, Համեստություն, Ծաղիկ իմ նուրբ, Համեստություն, Ձարթ իմ միակ, Կյանքիս ծովում՝ Ոսկե նավակ:

- Անվանի բանաստեղծ Բոգդան Ջանյանը, ողջունելով Ձեր մուտքը գրական աշխարհ, «Բարի ճանապարհի» խոսք գրեց Ձեր մասին՝ ընդգծելով Ձեր ինքնատիպ նկարագիրն ու ձեռագիրը. «Էննեստը միշտ ճանապարհի վրա է, հողի և դաշտի վրա, դրա համար էլ նրա երգերը հողաբույր են, դաշտաբույր: Հակառակ մեր մյուս երիտասարդ բանաստեղծների՝ Բեգլարյանը քչախոս է իր երգերում: Հաճախ այդ երգ կոչվածը մի քանի տող է, բայց ամբողջական է, խորք ու խորություն ունի և կարողություն է մտածել է տալիս: Խորհող բանաստեղծ է նա, և խոսն է նրա երգերի մեջ ամենից

շատ հնչողը, սակայն այդ խոհրտակ մտքի պտուղ չէ, խոհր ծնվել է սրտի ու մտքի դաշնությունից»: Ստեղծագործական Ձեր երկունքի պահը:

- Ամենաքաղցր Պահը ինձ համար երգիս ծննդյան Պահն է լուսավետ, Հոգիս լցվում է աստղերով անմար, Մրցում է սերս Կառ աստղերի հետ... Օ՛, փույթ չէ, թե ես՝ Անքուն ու համառ, Օրերս սպառեմ այդ պահի համար...

- Որոնումների մեջ եմ անդադար, Ձգտում եմ վեհին ու կատարյալին, Ուղեմիջ է ինձ հավատ անմար, Որպես լուսաստղ իմ ճանապարհին... Ինձ որոնելու համար, բարեկամ, Երգի կարողը պահիր քո հոգում. Ես քեզ կասի իմ հասցեն իսկական, Որ գրված է իմ ամեն լավ երգում:

- Ձեր ստեղծագործություններում կարմիր թելի պես անցնում է հայրենի հողի ուժը, գորությունը, բուրբուն և ավելի շատ Ձեր շառավիղներին հորդորում եք բնության հետ մերդաշն ապրել... Չայրենի հողը Ձեզ համար է՝ ծնող է, և՛ ուսուցիչ, ամեն ինչի համար՝ ապավեն:

- Քայլելու պահին Դու ամեն անգամ Ինձ ետ ես պահում Սայթաբուններից, Հոգ իմ հայրենի, Սիս միշտ այսպես, Իմ ամբողջ կյանքում Չեմարան ես ինձ...

- Ձորացի ծառի պես՝ Միայն հողի գրկում, Քո մայր հողի...

Ծերացի Ծառի պես՝ Միայն հողի գրկում, Քո մայր հողի... Մահացի Ծառի պես՝ Միայն հողի գրկում, Քո մայր հողի...

- Ի՞նչ խորհուրդ կտայիք Ձեզ պես որդեկան դառնությունը ճաշակող երեխաներին:

- Երբ հայրս զոհվեց, Խորհում էի ես, Թե ինչպես կյանքում Կապրեմ առանց հոր: Կայծակից ընկած Ծառի արմատից Ելած շիվը ինձ Հույս տվեց մի օր...

...Ես մայրն եմ Այդ շիվերին, Նրանց տեսքով հիանում, Նրանցով է այգիս ջահել, Նրանցով է մնայուն:

- Ճանաչելով Ձեր որդուն՝ Աշոտ Բեգլարյանին, տեսնում ենք, որ նա հավատարմորեն հետևում է Ձեր տված դասերին ոչ միայն նրանով, որ ինքն էլ ստեղծագործում է, գրող, լրագրող է, այլև մարդ լինելու պատգամին:

- Քո մաքառման ճամփեքին Նախ՝ հավատա ինքդ քեզ, Ապա հավատ ներշնչիր Դու ընկերներին, Թող քայլերդ միշտ կյանքում Լինեն հաստատ ու շիտակ, Որ շատերը հավատան Ոտնահետքերիդ...

- Այն դրոշակն եմ ես բռնած ամուր Միշտ առաջ գնում, Որով իմ հայրը հաղթեց թշնամուն Հայրենականում: Այդ դրոշակը այնքան ժամանակ Կտանեմ առաջ, Մինչև իմ որդու թևերն ամրաճան... Գա ինձ ընդառաջ:

Գրողի «Ես դեռ ողջ եմ» ընտրանու առաջաբանը դիպուկ

բնութագրում է Էննեստ Բեգլարյան մարդու, բանաստեղծի, քաղաքացու, ծնողի, ընտանիքի նախապետի վարք-էությունը:

«Պայծառ» հավատով է լի Բեգլարյանի քննարական հերոսը, մաքուր են նրա երազները, ջերմ, արևոտ, հուզող ու հուզվող և, որ կարևորն է, նվիրված է իր հայրենիքին: Սեղմ ոճով գրելով հանդերձ, նա ձգտել է յուրաքանչյուր ստեղծագործության մեջ խոր իմաստ դնել ու փիլիսոփայորեն ընդհանրացնել ասելիքը, ճիշտ նշանակետին խփել: Էննեստ Բեգլարյանի «Քննարական խոհեր» շարքի կապակցությամբ ԼՂԳ գրողների միության նախագահ Վարդան Չակոբյանը ժամանակին այսպես է բնութագրել նրա բանավեցությունը. «Կաթիլ-կաթիլ է գալիս Էննեստ Բեգլարյանի երգը, անմիջական է նրա երգը, անմիջական է նրա բանաստեղծական տողը, անկեղծ, առանց ձևականության ու ձևի: Տառապանքով, դժվար ու համառ. ահա Էննեստ Բեգլարյանը»: Է. Բեգլարյանի պոեզիան արցախյան քնարերգության ամենազուլալ աղբյուրներից է: Իսկ այդպիսին է, որովհետև այդ պոեզիայի ակունքը բանաստեղծի անկեղծ խոստովանությունն է, որովհետև իր կյանքն, իրոք, նա այդպես է ապրել՝ տուրք չտալով «ժամանակի պահանջներին», այլ պահել-պահպանելով իր հոգու ու տողի մաքրությունը, այն տողի, որը ծնվել է լույսից, ազնիվ սիրուց ու տառապանքից:

Ընթերցողը սիրով է ընդունում նաև հեղինակի երգիծանքը: Բանաստեղծը չէր հաշտվում անարդարությունների հետ: Էննեստ Բեգլարյանը կյանքում ազնվորեն տքնել ու արարել է, իր իսկ խոսքով, երբեք բեռ չդառնալով աշխարհի համար: «Ճամփիս մեծ մասը ոտքով եմ անցել», - անկեղծ խոստովանում է նա: Ահա թե ինչու մինչև կյանքի վերջին հանգրվանը համեստ ու անխաթար մնաց նրա պոետական ու մարդկային նկարագիրը: Էննեստ Բեգլարյանն արցախյան պոեզիայում իր անփոխարինելի տեղն ու դերն ունի: Եվ չնայած հեռացել է կյանքից, բայց մնացել է մեզ հետ և ապրում է իր ստեղծագործություններով, իր թողած հարուստ ժառանգությամբ:

Դո՛ւք ինչ բնութագիր կտայիք Ձեր բանաստեղծություններին:

- Լեռան կյանքով Ապրող իմ երգ, Լեռան նման հպարտ ու վեհ, Արծիվներին Դու թև ու հևք, Մոլոր հավքին՝ Հույս-ապավեն: Լեռան բախտին Կապված իմ երգ՝ Թրծված հողմի, Տապի շնչով, Թե հարկ լինի, Դու նաև զենք՝ Միշտ մարտունակ Լեռան կանչով...

Զրույցը՝ Ս. ՉԱԲՐԻԵԼՅԱՆԻ

Խոսք հիշատակի

ԲԵԼԼԱ ԵՐՎԱՆԻ ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ



Սույն թվականի հունիսի 23-ին 83 տարեկան հասակում կյանքին հրաժեշտ է տվել ԼՂԳ արվեստի վաստակավոր գործիչ Բելլա Փարսադանյանը:

Բելլա Փարսադանյանը ծնվել է 1938 թվականի հունվարի 11-ին Մարտակերտի շրջանի Տերտերգես գյուղում: 1952 թվականին ավարտել է Ստեփանակերտի երաժշտական դպրոցը և ընդունվել Երևանի Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի դաշնամուրային բաժինը: 1956 թ. գերագանց գնահատականներով ավարտել է հիշյալ ուսումնարանը, նույն թվականին ընդունվել է Երևանի պետական կոնսերվատորիան, որտեղ նրան դասավանդել է պրոֆեսոր Ս. Բունիաթյանը: Կոնսերվատորիան ավարտելուց հետո Լեռնային Ղարաբաղի ղեկավարության կանչով աշխատել է Ստեփանակերտի նորաստեղծ երաժշտական ուսումնարանում՝ որպես դաշնամուրի դասատու և կոնցերտմայստեր:

1961 թվականից սկսել է մանկավարժական գործունեությունը երաժշտական ուսումնարանում, որտեղ աշխատել է մինչև 2018թ.: 1965-1973 թվականներին ուսումնարանում աշխատել է որպես տնօրեն: Երկար տարիներ եղել է դաշնամուրային բաժնի վարիչ: Բազմաթիվ շրջանավարտներ է տվել, որոնց մեծ մասը, ստանալով պրոֆեսիոնալ նախապատրաստում, ուսումը պատվով շարունակել է կոնսերվատորիայում և վերադարձել ուսումնարան:

Աշխատանքային տարիների ընթացքում ակտիվ մեթոդական աշխատանքներ և կատարողական գործունեություն է իրականացրել, վերջին տարիներին՝ նաև որպես կոնցերտմայստեր:

2005 թվականին արժանացել է ԼՂԳ արվեստի վաստակավոր գործիչ պատվավոր կոչման:

2012 թվականին պարգևատրվել է «Երախտագիտության մեդալով»:

Բելլա Փարսադանյանը զգալի ներդրում ունի մեր հանրապետությունում դաշնամուրային արվեստի զարգացման, պրոֆեսիոնալ մասնագետների պատրաստման և, առհասարակ, մշակութային դաստիարակության գործում: Նրա անսպառ ավյունն ու եռանդը երբեք տեղի չեն տվել, և նա երբեք չի իջեցրել արհեստավարժության իր մշածողը: Նա միշտ հոգով երիտասարդ էր և կանգնած էր երիտասարդների կողքին՝ խանդավառվելով ու աջակցելով նրանց բոլոր զեղեցիկ նախաձեռնություններում: Իր սաներին տարիների ընթացքում անմնացորդ փոխանցել է ինչպես մասնագիտական գիտելիքները, այնպես էլ արվեստին նվիրվելու պատգամն ու իր հոգու ջերմությունը: Գործընկերների համար եղել է պրոֆեսիոնալ, ումից միշտ կարելի է սովորել, լինել խորհրդատու, լավ ընկեր:

Այն կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը իր վշտակցությունն ու գորակցությունն է հայտնում արվեստի վաստակավոր գործիչ Բելլա Փարսադանյանի հարազատներին ու մտերիներին՝ ծանր կորստի կապակցությամբ:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՊԵՏՔ Է ԱՅՆՔԱՆ ԱՌԱՋ ԳՆԱԼ, ՄԻՆՉԵՎ ԵՐԵՎԱ ԼՈՒՅԱԸ ԹՈՒՆԵԼԻ ԿԵՐՋՈՒՄ



«Լուսարար»-ի մարզական էջի հերթական հյուրը ճանաչված մարզիկ, մուսայի եվրոպայի և աշխարհի չեմպիոն Դավիթ Չայրապետյանն է, որն ընթերցողներին ծանոթ է մարզաշխարհում ունեցած իր հաղթանակներով, ինչպես նաև պրոֆեսիոնալ մարտում չեմպիոնի կոչմանը արժանացած լինելով: Իր բազմաթիվ մարզական ընկերների պես Դավիթն էլ հայ տղամարդուն վայել մասնակցեց 44-օրյա պատերազմին: Ուղևորվելու պատճառով Դավիթ Չայրապետյանը ստիպված էր ընդհատել պրոֆեսիոնալ մարզական կարիերան: Մինչդեռ ուժեղ կամքի ու հզոր ոգու տեր մարզիկը չի պատրաստվում խաչ դնել իր նախընտրած մարզաձևում սպասվելիք առաջընթացի վրա: Նրա վստահ խոսքով՝ մեծ սպորտ վերադառնալը ժամանակի հարց է:

Դավիթ Չայրապետյանը ծնվել է Արցախում՝ Մարտունու շրջանում: Բնակվելով Ստեփանակերտում՝ հաճախել է ավարտել է Կ. Ջահանգիրյանի անվան 11-րդ դպրոցը: «Մերոպ Մաշտոց» համալսարանի իրավաբանական մասնագիտության 3-րդ կուրսի ուսանող է: 2010-ից պարապում է մուսայի թայ մարզաձևով Արցախի մարտարվեստների ասոցիացիայում: 2014թ. Եվրոպայի K-1 երիտասարդների միջև առաջնության չեմպիոն է: 2015թ. Թայլանդում (մուսայ թայ-ը ծագել է Թայլանդում, այն անվանում են նաև թայլանդական բռնցքամարտ) երիտասարդների միջև կայացած մուսայ թայի աշխարհի առաջնության հաղթող է: 2017թ. K-1 աշխարհի առաջնության արծաթե մեդալակիր է: 2018թ. մուսայ թայի աշխարհի առաջնության բրոնզե մեդալակիր է:

**- Դավիթ, Արցախում գործող բազմաթիվ մարզաձևերի առկայության դեպքում ինչո՞ւ նախապատվությունը տվեցիք մուսայ թայ պարապելուն:**

- Մուսայ թայն ինձ գրավեց հատկապես նրանով, որ լինելով ուժային սպորտաձև, այն ավելի շատ իրական մարտի պես է: Իմ համոզմամբ՝ արցախցի տղամարդիկ, ապրելով տարածաշրջանում առկա չկարգավոր-

ված խնդիրների փուլում, ավելի շատ նախապատվություն պետք է տան ուժային սպորտաձևերին կոփված ու մարտունակ լինելու նպատակով: Բացի սպորտային հետաքրքրությունից, ես նաև այդ նպատակով եմ նախընտրել մուսայ թայ պարապել:

**- Կարո՞ղ եք պարզաբանել մուսայ թայ եւ K-1 մարզաձևերի տարբերությունը:**

- Այդ մարզաձևերի տարբերությունը նկատելի է մենամարտերի ժամանակ: Դրանք տարբերվում են որոշ կանոններով: Մուսայ թայում կան կլինչում, ոտանցուկ եւ արմունկներով հարվածներ, որոնք չկան K-1-ում:

**- Դեռ երեւելով Չեր մարզական ուղում՝ նկատելի էր, որ պրոֆեսիոնալ մարտերի աշխարհ էիք ընկղմվում: Հատկապես որ, 2019թ. Արցախում կազմակերպված HayFC-1 մրցաշարում առաջին անգամ մասնակցեցիք պրոֆեսիոնալ մարտի եւ հաղթեցիք: Նույն մրցաշարում հրավեր ստացաք MixFIGHT կազմակերպությունից «Հայերն ընդդեմ աշխարհի» վարկածով պրոֆեսիոնալ մարտերի մասնակցելու: Պատմեք, թե ինչ եղավ հետո:**

- Covid-ի պատճառով, ցավոք, մրցաշարը չկայացավ: Նույն պատճառով պարապմունքներն էլ սովորական հունով չէին անցնում: 2020թ. յոթ ամսով մեկնեցի Մոսկվա՝ մարզական հավաքների: Պատրաստվում էի մասնակցել Արուստիան կայանալիք 2020թ. մուսայ թայի աշխարհի առաջնությանը: Հավաքներից հետո եկա Երևան, որտեղ նույնպես հավաքների պետք է մասնակցեի եւ գնայի առաջնության: Սեպտեմբերի 27-ին Երևանում էի, երբ առավոտյան գանգեցին ու հայտնեցին պատերազմը սկսվելու չարաբաստիկ լուրը: Առանց ժամանակ կորցնելու դուրս եկանք: Արցախ մտնելու ճանապարհին խոչընդոտների հանդիպեցինք, ստիպված փոխեցինք ճանապարհը եւ սպասածից ուշ տեղ հասանք: Հայրս երթուղայինի վարորդ է: Այդ պահերին նա զինվորներ էր տեղափոխում անհրաժեշտ վայրեր: Ես ու ավագ եղբայրս էլ միասին զենքից կռիվ: Առաջին օրվանից մինչև վիրավորվել միասին էինք: Միասին մասնակցել ենք թե՛ մարտերի: Հոկտեմբերի 28-ին շրջափակումից դուրս գալիս թշնամու հետևանու զարկից բեկորային վիրավորում ստացա:

**- Հավանաբար ծանր է վերհիշել ու կրկին ապրել այդ պահերը, այնուամենայնիվ, ի՞նչ զգացողություն ունեիք այդ պահին:**

- Մտածում էի ընտանիքիս, հարազատներիս, եղբորս մասին: Նշեմ, որ սպորտում ծեռք բերած հմտություններս ինձ անեմուրեք օգնում են: Հատկապես վիրավորվելու պահին ինձ փրկեց արագ պաշտպանվելու ռեակցիան: Երբ նկատեցի, որ քիչ հեռվում բան է պայթում, իսկույն ռեֆլեքսորեն ծեռքերս բարձրացրի եւ գլուխս փակեցի: Բեկորները

դիպան ծախ կողմից, վնասվեցին ծախ ծեռքս, ուսս, կրծքավանդակս մասամբ, գլխիս ծախ կողմը: Եթե ռեակցիան չգործեր, գլխիս վրա ավելի ծանր հարված բաժին կընկներ: Ցավ էի ապրում ոչ միայն ֆիզիկապես, այլև ցավում էի հայրենիքիս համար, ընտանիքիս համար: Գիտակցությունս, այնուամենայնիվ, չկորցրի: Հիշում եմ, որ չէի կարողանում շարժվել, ինձ բարձրացրին ու հանեցին այդտեղից:

**- Բուժում ստանալուց հետո ինչպե՞ս է Ձեր առողջական վիճակը: Կարողանո՞ւմ եք շարունակել պարապմունքները:**

- Ինքնազգացողությունս վատ չէ: Գլխում օտար մարմիններ կան, որոնք ըստ բժիշկների եզրակացության, վիրահատման ենթակա չեն: Ձախ աչքիս տեսողությունը հինգ տոկոս է դարձել վնասվելուց հետո: Դրական միտումն էի արձանագրվում: Խոսակցություններ կային, որ միզուց պետք է լինի սպորտը թողնել: Բայց ես այնքան տարիներ մկիրվել եմ սպորտին ու պայքարին ոչ թե դժվարության հանդիպելով թողնելու նպատակով, այլ ամեն պարագայում պայքարելու: Սա էլ է պայքար: Որքան էլ մութ լինի գիշերը, միեւնոյն է, կգա առավոտ, ու լույսը կբացվի: Սկսել եմ պարապմունքներս: Աստիճանաբար կվերականգնեմ մարզական լավ վիճակս: Աշխատում եմ դեռ գլխիս վրա հարվածներ չընդունել: Ջգույշ եմ պարապում: Տրամադրվածությունս առաջվա պես մարտական է: Ժամանակը ցույց կտա հետագա ամելիքներս:

**- Դավիթ, շփվելով Չեզ հետ թեկուզ հարցազրույցի շրջանակում, ակնհայտ է դառնում, թե որքան ուժեղ եք ոգով ու կամքով, իսկ լավատեսության դրական լիցքերն ուղղակի հորդում են Ձեզանից: Լինելով մարզական հեղինակություն՝ Ձեր երկրպագուների համար նաեւ ոգեշնչման աղբյուր եք հանդիսանում: Ինչպե՞ս է դա Ձեզ հաջողվում:**

- Ցանկացած մարդու կյանքում մեծ դեր ունի դաստիարակությունը: Եթե վերլուծենք իմ ծնողներից ստացած պատգամները, ապա հասկանալի է դառնում, որ իմ կենսակերպը համապատասխանում է մեր նախնիների, մեր պապերի կյանքի բանաձևին: Հայրս մեզ այնպես է դաստիարակել, որ ցանկացած մեզ կար իրավիճակում գլուխը չպետք է կախել, հակառակը, պետք է ուժեղ լինել, հաղթահարել եւ դուրս գալ, օգնել դիմացինին, եղբորը, ընկերոջը: Իմ կյանքում շատ կարեւոր դեր ունի նաև իմ մարզիչներից ստացած մարզական դաստիարակությունը, որը նույնպես ուժեղ լինելու սկզբունքներ է պարունակում: Մեր պապերի գեներն են իմ մեջ նաև, որոնք արդար պայքար են սկսել, որոնց գործի շարունակողն ենք մենք: Վիրավորվելու ժամանակ եւ հետագա ամիսներին մտաբերում էի սպորտում ունեցած տարիների քրտնաջան աշխատանքս: Իմ պայքարը թերեւս այդ կերպ էլ էր: Պատահել է, որ միջազգային պատվանդանին կանգնած, երբ բարձրացնում էին հայկական դրոշմը, աղբյուրներում էին հայկական պատվանդանը, աղբյուրներում էին հայկական պատվանդանը: Այս փորձությունն իզուր չէր տրված: Նախնիների ուժն այնքան է ինձ հասել, որ կարողացել եմ պատերազմի ինձ ճիշտ դրսևորել: Սպորտից ստացած օգուտն էլ է շատ: Իհարկե, չեմ պատկերացնում, թե երբեք կարող է սպորտը թողնեմ հիվանդության պատճառով, հատկապես որ պրոֆեսիոնալ սպորտում դրսևորվելու ցանկություն ունեմ: Միեւնոյն ժամանակ հենց սպորտի տված հմտություններն են չուսահատվելու եւ առաջ գնալու ուժ տալիս: Երբեք չպետք է իուսահատվել:

**- Ասում եք, որ փորձություններն իզուր չեն տրված, իսկ ի՞նչ դասեր պետք է քաղել պատերազմից:**

- Նկատվում է, որ պատերազմից հետո մարդիկ փոխվել են 180 աստիճանով: Դասեր շատ ունենք քաղելու: Փախչողներ միշտ լինում են: Դա՝ մի կողմ: Դժվարությունները փախչելով չեն հաղթահարի: Մենք պիտի մտածենք մեր երկիրը հզորացնելու մասին: Ավելի շատ պետք է անվտանգության մասին մտածել եւ քայլեր ձեռնարկել: Հայրենիքի պաշտպանության գործում մեծ դեր ունի աճող սերունդը, եւ թե ինչպես են նրանք դաստիարակվում: Կարեւոր է, որ սերունդի հայրենասիրություն, հայրենիքում մնալու, հայրենիքը պաշտպանելու, ամուր թիկունք ապահովելու կարեւորության գիտակցում: Եթե որեւէ նպատակ պատերազմի պատճառով կիսատ է մնացել, չպետք է ընկճվել, պետք է պայքարել, շարունակել հասնել նպատակին: Եթե ընկել ենք մութ թունել, չպետք է կանգնել, պետք է այնքան առաջ գնալ, մինչեւ չեքուս լույսը, իսկ գնալու ճանապարհին չպետք է իուսահատվել:

**- Մեկ հարց անձնական կյանքից: Շատ աղջիկներ կցանկանային Ձեզ նման չընկճվող, ուժեղ, հայեցի, հավասարակշռված տղամարդ ունենալ իրենց կողքին: Հետաքրքիր է, որեւէ մեկին, արդյո՞ք, բախտ է վիճակվել արդեն:**

- Դեռ այդ մոտիվացիան չունեմ: Գիշտ է, դարաբաղի աղջիկները շատ սիրում ու խելացի են, հակված են այն մտքին, որ իմ ընտրյալը դարաբաղի լինի: Բայց եթե այդպես էլ չլինի, կարեւորը՝ լավ մարդ լինի: Դեռ չեմ ընտրել ոչ մեկին:

**- Դավիթ, թե՛ առողջական, թե՛ մարզական, թե՛ անձնական կյանքում Ձեզ մարդու ենք հաջողություն: Ընդհակառակը ուստի որո՞ւմ եք ձեր կյանքը:**


- Ձեզ էլ շնորհակալություն:

ՄԵՄԻՆԱՐ ՄԱՐԶՈՒՄՆԵՐ ԵՎ ԳՈՏՈՒ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Մարզական աշխարհի ներկայացուցիչները մեծ նշանակություն են տալիս պարբերաբար կազմակերպվող սեմինար մարզումներին ու քննություններին: Մարտարվեստների աշխարհում սեմինար հավաքները եւ մարզիկների գոտեվորման քննությունը թերեւս պարապմունքի գլխավոր մասն են կազմում: Սեմինար մարզումների եւ գոտու որակավորման քննության կարեւորության եւ ավանդույթների մասին ավելի մանրամասն տեղեկացանք՝ քննարկելով Արցախի ավանդական կարատե դո եւ Արցախի «Օյամա» կիոկուշին կարատե դո ֆեդերացիաների մասնակցությամբ կայացած միջոցառումների վերաբերյալ թեմաներ:

2007 թվականից սկսած՝ Աշխարհի ավանդական կարատե դո ֆեդերացիայի նախագահ Վլադիմիր Կվիչինսկին պարբերաբար գալիս է Հայաստանում սեմինար պարապմունքներ անցկացնելու եւ գոտու որակավորման քննություն ընդունելու: Հունիսի 13-ին հերթական սեմինարը կազմակերպվեց Երեւանում, որին մասնակցեցին նաև Արցախի

ավանդական կարատե դո ֆեդերացիայի հինգ մարզիչներ: Սեւ գոտի 9-րդ դաս ունեցող



վարպետ Վլադիմիր Կվիչինսկին հանդիսանում է մեր մարզիչների ամնիջական ուսուցիչը:

Նա իրավունք ունի ընդունելու սեւ գոտու համար հանձնվող քննություն: Շուրջ 4 ժամ տեւած սեմինարին մասնակցել են Հայաստանում եւ Արցախում ավանդական կարատե դո պարապող մարզիչներ՝ սեմինարներ են մարզիչների օգնականներ՝ սեմայաներ: Մարզիչները սեմինարից վերադարձել են տեսական եւ գործնական գիտելիքների ավելացմամբ: Սեմինարին մասնակցած մարզիչ Տիգրան Գեորգյանը ներկայացրեց, որ վարպետ Կվիչինսկին շատ խորն է տիրապետում Ավանդական կարատե դո մարտարվեստի պատմությանն ու ավանդույթներին: Սեմինարի ժամանակ մեծ կարեւորություն է տրվում ավանդական կարատեի պատմության հիշմանը: Տիգրան Գեորգյանը մեզ փոխանցեց այն հիմնական սկզբունքները, որոնց պետք է տիրապետի ավանդական կարատեում իր ճանապարհն անցնող յուրաքանչյուր մարզիկ՝ առաջին քայլերից մինչեւ վարպետություն: Առաջին տեղում ոգին է, երկրորդ տեղում՝ մարմինը: Կարատեիստը պետք է ոգին ու մարմինը կատարելագործի պարապմունքներ-

րի միջոցով: Հաջորդ կարեւոր սկզբունքը ոգու եւ մարմնի համատեղ աշխատելուն հասնելն է: Այդպես դառնում են մարտիկ՝ բուրդ, որը տիրապետում է իր ոգուն, հոգուն, զգացմունքներին: Ոգին միշտ մնում է ջահել՝ ի տարբերություն մարմնի, որը ծերանում է: Կարատե պարապող իրական մարտիկները ոգով միշտ ուժեղ եւ ջահել են մնում: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում մարտավարության հոգեբանությանը: Գիշտ պարապելու շնորհիվ սովորում են իրական մարտում բացթողումներ չանել: Տեխնիկայի կատարման ճիշտ հերթականությունը ձեւավորում է դինամիկան, որի ժամանակ հարվածը կատարվում է արագ, թեթեւ: Ընչառությունը եւս մեծ կարեւորություն ունի: Սեմինարի ժամանակ քննարկվել են նաև շնչառության եւ շարժման կապը, նրբությունները: Յուրաքանչյուր շարժում ունի իր շնչառության ձեւը:

Աշխարհում շատացել են կարատեի դպրոցները: Ավանդական սկզբունքները գնալով կորցնում են իրենց արդիականությունը կարատե սպորտային դարձնելու եւ դրան

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՏՈՂԻ ԱՐՎԵՍՏԻ ԳԴՐՈՅԸ՝ ՆՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Ժամանակակից հնչողություն հաղորդելու պատրվակի տակ: Մինչդեռ կարատեի ավանդական ոճերը պահպանող դպրոցները նույնպես քիչ չեն: Արցախում ավանդական կարատեի ֆեդերացիայի ակումբը ստեղծվել է 1994թ. եւ գործում է մինչեւ հիմա: Զարյուրից ավելի մարզիկներ ստացել են սեւ գոտի վերջին քսանհինգ տարում: Տարբեր սերունդներ են անցել պարապմունքի դժվարություններով: Քչերին է հաջողվում արժանանալ սեւ գոտու, որին հասնելու ճանապարհին դժվար պահանջներ են դրված: Բայց իրական կարատեիստները չեն նահանջում դժվարությունների առաջ:

Առաջիկայում ֆեդերացիան կկազմակերպի սեմինար-պարապմունք Արցախի մարզիկների համար՝ փոխանցելու վարպետ Կվիչինսկուց ստացած տեսական եւ գործնական հարուստ գիտելիքները:

Կարատեում վարպետությունն ու հմտությունը հիմնված են գոտիների եւ աստիճանների համակարգերի վրա: Ուսումնական աստիճանները Քյու են կոչվում, ներառում են 9-ից մինչեւ 1 մակարդակ, իսկ վարպետականը՝ Դան, ներառում են 1-ից մինչեւ 9 մակարդակ: Վարպետության մակարդակից կախված՝ տարբերում են գոտիների գույներ: Ինչքան բարձր է վարպետության մակարդակը, այնքան մուգ է գոտու երանգը: Տարբերում են գոտու յոթ երանգ համապատասխան հերթականությամբ՝ սպիտակ, դեղին, գազարագույն, կանաչ, կապույտ, մուգ կապույտ, շագանակագույն: Վարպետները կրում են սեւ գոտի:

Ըստ ավանդույթի՝ երբ մարզիկը սկսում է պարապել կարատե,



նրան տալիս են սպիտակ գոտի: Որոշ ժամանակ անց գոտին դեղնում է՝ պայմանավորված պարապմունքների ժամանակ թափած քրտինքով: Շատ ամիսներ տեւած ծանր պարապմունքներից գոտին կանաչում է: Մի քանի տարի պարապելուց հետո գոտին դառնում է շագանակագույն: Եթե կարատեիստը շարունակում է քրտնաջան պարապել, գոտին աստիճանաբար սեւանում է: Սեւ գոտին նշանակում է, որ մարզիկը երկար տարիներ ջանասիրաբար պարապել է կարատե: Սեւ գոտի ստանալուց հետո, որը համեմատվում է «Սպորտի վարպետ» կոչման հետ, սկսվում է աստիճաններով՝ դաներով բարձրացումը: Յուրաքանչյուր դան ստանալու համար հանձնում են դժվարագույն քննություններ, որոնք ներառում են կատաներ, կումիտներ ու ժեղագույն մարզիկների հետ, դիսերտացիայի պաշտպանություն:

Եթե որեւէ աստիճան, պարապմունքի որեւէ մաս բաց թողնվի, ապա դա կարատեիստի պատրաստման մեջ խոցելի տեղ կդառնա: Ինչպես հայտնի է, կտրվում է այն տեղից, որտեղ բարակ է: Այդ խոցելի տեղը կարող է պատռվել տեխնիկայում, տակտիկայում, ֆիզիկական պատրաստվածության մեջ, կարատեիստի հուզական վիճակում եւ բերել պարտության վճռորոշ պահի: Եվ միայն ոգով ու ժեղ ու գիտակցությունը կառավարող մարզիկը կարող է կառուցել ուժեղ մարմին եւ հասնել ընդհանուր ներդաշնակության, իսկ այդպիսի մարդիկ պարտություն չգիտեն, դառնում են անհաղթ:

Հունիսի 19-ին Արցախի կիսկուշին կարատեի ֆեդերացիան կազմակերպեց գոտու որակավորման քննություն, որին մասնակցեց 210 մարզիկ՝ սկսած վեց տարեկանից: Քննությունն ընդունելու էին եկել 33 կիսկուշին կարատե դո ֆեդերացիայի նախագահ Սպարտակ Գասպարյանը եւ փոխնախագահ Զրաչիկ Գրիգորյանը: Զաջողությամբ հանձնելով կիսկուշինի կատա եւ կումիտ քննությունները, որոնք կազմում են մարզածելի ընդհանուր հիմքը, ֆեդերացիայի մարզիկները ստացան համապատասխան գոտիներ: Դիտելով մարզիկների կատարումը՝ նկատվում էր մարզածելին տիրապետելու բարձր մակարդակ եւ ուժեղ ոգի: Զուգորդությունն ակնհայտ է. այսօրվա ուժեղ մարզիկը ապագա ուժեղ մարտիկ է: Մարզիչ Արթուր Առուշանյանը պատմեց, որ քննությունը մարզիկի կյանքում մեծ նշանակություն ունի: Դրանով հնարավորություն է տրվում պարզելու եւ գնահատելու մարզիկի՝ մարզածելին տիրապետելու աստիճանը, վերհանել այն կետերը, որոնց պետք է առավել մեծ ուշադրություն դարձնել պարապմունքների ընթացքում:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

Տոլի արվեստի դպրոցը դարձավ 15 տարեկան:

Հիմնադրվել է 2005թ. լրագրող, երաժիշտ Սուսաննա Բալայանի նախաձեռնությամբ և Սփյուռքի, Հայաստանի, Արցախի բարերարների աջակցությամբ: Երեք տարի բարեգործական հիմունքներով գործելուց հետո դպրոցի ղեկավարության խնդրանքով արվեստի այդ կրթօջախը դարձավ պետական: Իսկ 2011թ. ստացավ ՊՈԱԿ-ի կարգավիճակ: Դպրոցում գործում է 5

ներից: Լավագույն աշակերտները մասնակցում էին երկու հայկական հանրապետություններում անցկացվող մրցույթ-փառատոներին և արժանանում մրցանակների:

Դեռ 2020-ի սեպտեմբերին պլանավորում էին բազմաթիվ միջոցառումներ՝ նվիրված հոբելյանական տարեթվին: Սակայն պատերազմը խաթարեց բոլոր պլաններն ու ծրագրերը:

Այնուամենայնիվ, պատերազմից հետո, շնորհիվ դպրոցի տնօրինության



հետևողական և նախանձախնդիր աշխատանքի և կոլեկտիվի կամեցողության, դպրոցը կարողացավ երա կան և գ. մ. վել՝ իր գործունեությունը ծավալելով համարապետության այլ շրջանների՝ Ասկերանի շրջանի Նախիջևանի կ, հնածախ, Այգեստան, Մարտակերտի շրջանի Ծանկահող, Առաջաձոր գյուղերում: Նաև Ստեփանակերտում են աշխատում այն աշակերտների հետ, ովքեր պատերազմից հետո Հայաստանից վերադարձել են և ժամանակավոր բնակություն հաստատել Ստեփանակերտում: Պլանավորում են մասնաձյուղ բացել նաև Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղում:

Հունիսին դպրոցը սկսել է հաշվետու համերգները գյուղերում: Վերջին համերգը կազմակերպվեց հունիսի 29-



րոցի նախկին շրջանավարտները, որոնք իրենց մասնագիտական վարպետացումն անցնում են Ստեփանակերտի երաժշտական քոլեջում՝ միաժամանակ աշխատելով դպրոցում, ինչպես նաև՝ դասատուները: Հասմիկ Խանդերյան (Սեծ Թաղեր), Տաթև Մնացականյան (Հարդուք)՝ քանոն, Անուշ Համբարձումյան՝ երգ (Ավետարանոց), Աննա Բաղդյան՝ դաշնամուր:

Թաղուտ գյուղից դպրոցի նախկին շրջանավարտ, Ստեփանակերտի Սայաթ-Նովայի անվան երաժշտական քոլեջի այս տարվա շրջանավարտ, համարապետական և միջազգային մի քանի մրցույթների մրցանակակիր Սեդրակ Ավագյանը (դուդուկ) դաիլիճը շիկացրեց հայկական պարեղանակների նվագով: Ի դեպ, վերջերս երևանում կայացած Դուդուկի առաջին միջազգային փառատոնում նա արժանացել է հատուկ մրցանակի: Հուլիսին կսկսվեն կոնսերվատորիայի նրա քննությունները: Մարթենք հաջողություն:

Համերգը վարում էր դպրոցի հիմնադիր-տնօրեն Սուսաննա Բալայանը, իսկ որպես ավանդույթ, այն եզրափակեց դպրոցի ժողովրդական երգի դասատու Մարատ Հովհաննիսյանը, որի խոսքը նույնպես բաջալերիչ էր, իսկ «Զախորդ օրեր»-ի նրա կատարումը ուղղակի մեծ ոգևորություն առաջացրեց ունկնդիրների մոտ՝ նրանց վարակելով լավատեսությամբ:

Համերգին ներկա՝ ԱՐ ԿԳՄ նախարար Լուսինե Ղարախանյանը, ելույթ ունենալով, ասաց. «Տոլի արվեստի դպրոցի մասին անցյալ ժամանակվ չենք խոսելու: Այն շարունակելու է իր գործունեությունը, արդեն իսկ ունի իր մշակած սկզբունքները, իր գործունեության համակարգը, մեխանիզմները: Նախարարությունը լինելու է Տոլի արվեստի դպրոցի կողքին, և այն շարունակելու է մշակութային կրթություն տարածել, գեղագիտական դաստիարակություն սերմանել գյուղական միջավայրում: Ընդհակառակը՝ ծերակալություն ձեռք գաղափարական, հոգևոր, մշակութային ինքնակազմակերպվածության համար»:

Համերգը բացվեց Նախիջևանիկ



ներվեց համագործակցություն բաժինների միջև: Եվ հետաքրքիր նախագծեր իրականացրին, ինչպես, օրինակ՝ Ալ.Մանասյանի «Արցախյան սիրո հեքիաթ կամ արս», պա ստի պեն կինի» պոեմի բեմադրությունն էր:

Տարեցտարի ավելանում էր աշակերտների թիվը: Վերջին տարիներին ուներ 3 մասնաձյուղ Սեծ Թաղերում, Ազոխում, Ուխտաձորում: 2020թ. սեպտեմբերին դպրոցում սովորում էր 240 աշակերտ Տոլից, Ազոխից, Սեծ Թաղերից, Հակակուղից, Թաղուտից, Մարիամաձորից, Ծակուռիից, Զրակուսից, Դրախտիկից, Ուխտաձորից, Քյուրաթաղից, Ալնաղբյուրից, անգամ՝ Մարտունու շրջանի Թաղավարդ գյուղից:

Ստեփանակերտում կայացած հաշվետու համերգը բաղկացած էր երեք մասից:

Առաջին մասում ելույթ ունեցան դպրոցի 1-ին դասարանի աշակերտները: Համերգը բացվեց Նախիջևանիկ

Ս. ԱՎԵՐԵՆՅԱՆ

ԳՐԱԿԱՆ

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒՄ ԵՆ ԱՐՊՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ԽՈՍԸ «ԲԱՐԻ ԵՐԹ»-Ի

Աշխարհահռչակ այն բանաստեղծները, ովքեր ծանոթացել են հայ պոեզիային և ժողովրդական բանահյուսությանը, գրել են, որ հայ ժողովուրդը բանաստեղծ է:

Այդ կարծիքը առանձնահատուկ երանգ ունեցավ, երբ ռուս անվանի բանաստեղծ ու հայագետ Վալերի Բրյուսովը 1916-ին կազմեց և հրատակեց «Հայ պոեզիայի ժողովածուն»: Հայ բանաստեղծների բանաստեղծությունների մեծ մասը ու ժողովրդական երգերը թարգմանեց ինքն անմիջապես բնագրից, որովհետև տիրապետում էր մեր մերոպայան լեզվին: Նա բարձր գնահատեց Գրիգոր Նարեկացուն, Նահապետ Քուչակին, Սայաթ-Նովային, Դավիթ Թումանյանին, Ավ. Իսահակյանին, Վ. Տերյանին և մյուս մեծերին ու նաև հայ բանահյուսական երգերը ու գրեց. «Ծիշտ են ասում, որ հայ ժողովուրդը բանաստեղծ ժողովուրդ է»:

Հայ ժողովրդի ռուս որդու՝ Բրյուսովի այդ հաճելի գնահատականը վերաբերում է նաև մեր իրար հաջորդող սերունդների ստեղծագործական կարողություններին:

Վաթսուն տարուց ավելի է, ինչ դասավանդում են բուհերում «Հայ գրականության պատմություն» առարկան: Եվ ըստ բանաստեղծական մղումի առաջին կուրսի ուսանողներին հարցնում են, թե ով է ստեղծագործում, և երբ նրանց մի ստվար մասն ասում է, որ ստեղծագործում են չափածո և արձակ, մի կողմից հրճվում է սիրտս, մյուս կողմից վերհիշում են մեծն Բրյուսովի համոզմունքը, որ մեր ժողովուրդը բանաստեղծ է, վկան՝ «Վահագնի ծնունդը», որի տարիքը դժվար է որոշել, և որը համաշխարհային ժողովրդական պոեզիայի գլուխգործոցներից է:

Մեր կողմից ներկայացվող չափածո և արձակ երգերի այս շարքը կրկին ու կրկին հաստատում է և՛ հարազատ ժողովրդի արարող աստվածային շնորհքը, և՛ հիշեցում անմահ Բայրոնի խոսքը. «Աստված ժողովուրդների հետ խոսել է հայերեն»:

Ընտրելով մեր ուսանողների սույն գործերը՝ նկատել ենք հետևյալ առանձնահատկությունները: Առաջին՝ նրանք արարելու աստվածամկեր շնորհք ունեն, երկրորդ՝ նրանք իսկ և իսկ իրենց ապրած օրերի երգիչներն են, որոնց գործերի հիմնական երակն արցախյան ազգային ազատագրական պայքարի ավիշն է, մեր ժողովրդի տագնապի-հառնումի, ցավի-համբերության, մաքառման-հույսի ծիածանված ճիշդ:

Ընթերցողը, ծանոթանալով սույն գրական էջը ներկայացնող գործերին, անշուշտ, համոզվելու է մեր այս դիտարկումի ճշմարտացիության մեջ:

Ուստի, «Բարի երթ» մտղթենք մեր շնորհալի ուսանողներին և ավելացնենք. «Ստեղծագործել՝ նշանակում է յուրացնել համաշխարհային լավագույն մտղշները, երբեք չդադարել ստեղծագործելուց ու հավատալ, որ ինքը ծնվել է մայրենի գեղարվեստական խոսքը զարգացնելու և հարստացնելու համար»:

Սուրբաբ ԽԱՆՅԱՆ  
Բանաստեղծ-գրականագետ

Համիկ ԱՎԱՆԵՍՅԱՆ  
Հայոց լեզու և գրակ., 2-րդ կուրս

ՀԱՅՐԵՆԻՔ

Դու իմ մեջ եղած թախծալուր կարոտ, Դու իմ մեջ եղած սերը երզվյալ, Զրացոյք արևի, հայոց երկնի տակ Իմ հավերժ սերն ես, երկիրը իմ մայր: Տանիքդ դարձյալ փլվել է կռվում, Երգերդ դարձյալ հնչում են թախծոտ, Վանքերդ դարձյալ փլվում են, քանդվում, Երկինքդ դարձյալ գորշ է, մշուշոտ: Դարձել ես մի քիչ լուռ ու տխրամած, Դարձել ես մի քիչ երերող բարդի, Կենաց տանջանքի ծանրությունն ուսած, Ամեն մի վերքդ՝ իմ Սրտի ավիշն: Աշխարհից խռով ու երես թեքած Ու դաժան ցավից ողբասաց չես դու, Ապրում ես ասես քեզնից օտարված, Բայց էլի ջահ ես քո դժվար կյանքում: Ձիճք արցունքներդ սրբում ես խռով Ու չես հառաչում, կորուստներից բյուր, Դու քո նոր երգն ես հյուսում անխռով, Մնալով պայծառ երագներով հուր: Ու թեպետ խորին վերքերդ են դեռ բաց, Բայց էլի նույնն ես՝ վեհ ու հաղթական, Իմ Արցախ, իմ մայր, իմ լուսն՝ գալիք, Հավերժական ես որպես հայրենիք: Մի բուռ երկիր ես, բայց միշտ անառիկ, Գարնան արև ես հավիտյան պայծառ, Դու խաղաղության զինվոր դարերի, Ծաղկիր վերստին, քայլիր հաղթական: Ընծյուղվիր նորից, ապիրի, արարիր, Դու մեր պապերի երկիր դարավոր, Մենք քո թևերն ենք ու թռչքը նոր:

Դիանա ԿԱՍՅԱՆ  
Հայոց լեզու և գրակ., 2-րդ կուրս

ԿԱՐՈՏՍ ԱՆՈՒՆԴ ՈՒՆԻ

Ասում են՝ կարոտը անուն չունի, Իսկ իմ կարոտը ունի, Իր գույնը ունի, Իր շունչը ունի: Ասում են՝ կարոտը թևեր չունի, Իսկ իմ կարոտը սավառնել գիտի: Ասում են՝ կարոտը խոսել չգիտի, Կարոտիս կանչը ոչ միայն խոսել, Աղոթել գիտի: Ասում են՝ կարոտը աչքեր չունի, Իսկ իմ կարոտը տեսնում է հեռուն, Նաև արտասվում, Ասում են՝ կարոտը համ ու հոտ չունի, Իսկ իմ կարոտը համ ու հոտ ունի: Ասում են՝ կարոտը հասցե չունի, Իսկ իմ կարոտը հասցեի տեր է... Ասում են՝ կարոտը չունի զգացում, Ո՛չ, իմ կարոտը զգացում ունի: Ասում են՝ կարոտը խաղաղ քուն չունի, Ծիշտ է, քուն չունի ու դադար չունի, Բայց գիտե՞ք, արդյոք, որ երազ ունի: Ուզո՞ւմ եք իմանալ կարոտս ով է, Կպատասխանեմ՝ Իմ ծով կարոտը իմ նոր թևերն են, Երկրիս պաշտպանն է, Իմ զինվոր Սերն է...

Մարիամ ԴՊՂՈՍՅԱՆ  
ԱրՊՀ Հայոց լեզվի և գրականության բաժին, 1-ին կուրս

ՀԱՎԱՏ

Ձինջ էր երկինքս, աստղաշող ու պարզ, Ջրերս՝ գուլալ, բյուրեղյա ու պարզ, Հավքերն՝ առնաքնող իրենց երգերով, Աշունը ժպտուն՝ առատ մրգերով:

Արևը լույսի շողերն էր ցանում, Լեռների շունչը շոյող գեփյուռն էր, Եվ հանկարծ կռվի ծայնն է թեժամուն, Երբ ծեր ու մանուկ քնած էին դեռ:

Արցախ աշխարհը ցնցվում է նորից, Տագնապի շունչն է հնչում լեռներում, Կայծակը վերից, խավարը՝ ծորից, Արհավիրքի թեժ լուրերն են բերում:

Ախ, ինչո՞ւ, ինչո՞ւ մեր քունը խախտվեց, Ինչո՞ւ երկինքը մշուշվեց մեկեն, Լույսը չբացված, օրը խավարեց, Ձոհերի արյամբ դաշտերը ներկվեց:

Թեժ պատերազմը թևեց ահարկու, Ու որոտացին զենքերն ահավոր, Կրակի տակ են մեր քաղաքները Ու մեր գյուղերը շեն ու դարավոր:

Պատասխանում են հերոսները մեր, Թշնամին վախից թողնում է, փախչում, Աշուն են, արծիվ տղաները մեր, Իրենց պապերի պես են մարտնչում:

Կռիվը թեժ էր, դիրքերում՝ զոհեր, Մայրն էր սպասում, որ տուն գա որդին, Երեխան իր հոր ճամփան էր պահում, Վառվում էր սիրած աղջկա ոգին:

Մայրական սիրով ազգն էր աղոթում Հաղթության հանդեպ հավատով խորին, Աստղերի մման գիշերներն արթուն Կանթեղվել էին աղջիկները նուրբ:

Երբ մայրն է որդուն կռվի դաշտ ճամփում, Երբ զինվորի հետ սերն է աղջկա, Սուրբ երկրի համար ընթացող մարտում Նման զինվորին պարտություն չկա:

Սյուզաննա ՍԱՀԱԿՅԱՆ  
Հայոց լեզու և գրակ., 2-րդ կուրս

ԻՄ ԱՐՅԱՆԸ

Սեպտեմբերի քսանյոթն էր, Աշուն սիրուն առավոտ, Լսվեց հուժկու դղրոցը՝ Շանթ էր, կրակ ու որոտ:

ԿՈՐԵԼ Է  
ԱՆՆԱ ՎԻՏԱԼԻԻ Աբրահամյանի՝ AK154282 դիպլոմը՝ տրված 2017թ. Ստեփանակերտի պարարվեստի քոլեջի կողմից:

ՀԱՌՄԱՐԱՐ  
ԽՄԲԱԳԻՐ՝  
Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ  
Հիմնադիր՝  
«Լուսարար»  
ՓԲԸ  
Ստեփանակերտ,  
Հ. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99,  
E-mail: gorcert@mail.ru: www.lusarar.info  
Մեջբերումների և փաստական տվյալների ստույգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:  
Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլուս» ՄՊԸ-ում: Ծավալը՝ տպագրական 3 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 30.06.2021թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: